ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
22.11.2011 թ. թիվ 313-Ա որոշմամբ

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Գնահատական)

2011 թ. 3-րդ եռամսյակ

ԵՐԵՎԱՆ

Բովանդակություն

1. Համառոտագիր	**3**
2. Գնաճի զարգացումներ	**5**
2.1. Գնաճն ըստ ապրանքների և ծառայությունների խմբերի, բնականոն գնաճ	5
Գնաճի տատանումների վիճակագրական վերլուծություն	6
2.2. Գնաճի նպատակի իրագործում	10
3. Գնաճի գործոններ	**13**
3.1. Արտաքին միջավայր	13
3.2. Վճարային հաշվեկշիռ	21
3.2.1. Ընթացիկ հաշիվ	21
3.2.2. Կապիտալի և ֆինանսական հաշիվ	23
3.3. Տոկոսադրույքներ, փոխարժեք և դրամավարկային զարգացումներ	24
3.3.1. Տոկոսադրույքներ	24
3.3.2. Փոխարժեք	27
3.3.3. Դրամավարկային զարգացումներ	29
3.4. Համախառն պահանջարկ և առաջարկ	32
3.4.1. Համախառն պահանջարկ	32
3.4.2. Համախառն առաջարկ	35
3.5. Աշխատանքի շուկա	36
3.6. Ներմուծման գներ և արտադրողների գներ	37
3.6.1. Ներմուծման գներ	37
3.6.2. Արտադրողների գներ	38
3.7. Գնաճի սպասումներ	39

1. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2011 ԹՎԱԿԱՆԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՓԱՍՏԱՑԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

2011 թվականի երրորդ եռամսյակում գնաճային միջավայրը շարունակել է թուլանալ, ինչին նպաստել են և՛ ներքին, և՛ արտաքին մակրոտնտեսական միջավայրի զարգացումները: Մասնավորապես՝ միջազգային շուկաներում հիմնական պարենային և հումքային ապրանքների գները հարաբերականորեն կայուն վարքագիծ են ցուցաբերել, իսկ մի շարք ապրանքատեսակների գները նույնիսկ որոշակի նվազել են: Միաժամանակ, ներքին պահանջարկի դանդաղ տեմպերով վերականգնման, իրականացված զսպողական հարկաբյուջետային ու դրամավարկային քաղաքականությունների ազդեցությամբ և գյուղատնտեսության ոլորտում ապրանքների առաջարկի ավելացմամբ պայմանավորված՝ ներքին միջավայրից գնաճային ճնշումներ չեն դրսևորվել: Այդուհանդերձ, պայմանավորված շաքարավազի և մի շարք պարենային ու ոչ պարենային ապրանքների շուկաներում հարկային վարչարարության խստացմամբ, 12-ամսյա գնաճը եռամսյակի ավարտին դեռևս պահպանվել է նպատակային միջակայքից ավելի բարձր մակարդակում:

Նկարագրված միջավայրում երրորդ եռամսյակի ավարտին 12-ամսյա գնաճը կազմել է 6.2%՝ նախորդ եռամսյակի նույն ցուցանիշի համեմատ նվազելով շուրջ 2.3 տոկոսային կետով: 12-ամսյա գնաճին պարենային ապրանքների գների աճի նպաստումը կազմել է 5 տոկոսային կետ, որից միայն 3.4 տոկոսային կետը բաժին է ընկել շաքարավազի, մսամթերքի, կաթնամթերքի և ձվի գների աճին: Ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների նպաստումը կազմել է համապատասխանաբար 0.5 և 0.7 տոկոսային կետ:

2011 թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի տնտեսական աճի տ/տ ցուցանիշի վրա հիմնված ՀՀ ԿԲ գնահատումները համահունչ են նախկին կանխատեսումներին: Ընդ որում՝ նախորդ կանխատեսումներում նախանշված՝ արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերում՝ աճի ուղղությամբ, իսկ շինարարության ճյուղում՝ նվազման ուղղությամբ ռիսկերի դրսևորման արդյունքում շինարարության ճյուղի անկումը ամբողջությամբ փոխհատուցվում է արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերի՝ ակնկալվածից բարձր աճով:

Տնտեսական աճը նշված ժամանակահատվածում հիմնականում պայմանավորվել է արդյունաբերության, գյուղատնտեսության և ծառայությունների ճյուղերում համապատասխանաբար տ/տ 14.8%, 15% և 3.7% գնահատվող աճով:

Պաշտոնապես գրանցված գործազրկության միջին եռամսյակային մակարդակը երրորդ եռամսյակի ընթացքում նվազել է՝ արտահայտելով աշխատուժի նկատմամբ պահանջարկի ավելացումը: Նույն ժամանակահատվածում անվանական աշխատավարձերի աճը համահունչ է եղել աշխատանքի արտադրողականության աճին: Արդյունքում՝ տնտեսությունում մեկ միավոր արտադրանքին բաժին ընկնող աշխատուժի ծախսերի էական փոփոխություն տեղի չի ունեցել: Այսպիսով կարելի է փաստել, որ միավոր աշխատուժի ծախսերի փոփոխության ազդեցությունը գնաճի վրա երրորդ եռամսյակում եղել է գրեթե չեզոք:

2011 թվականի երրորդ եռամսյակում մասնավոր հատվածի ծախսումները նախորդ տարվա համեմատ ավելացել են մոտ 6%-ով: Պետական ծախսումներն իրական արտահայտությամբ ավելացել են մոտ 1%-ով, իսկ ներքին պահանջարկը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 5%-ով: Մասնավոր ծախսումների կազմում մասնավոր սպառումն ավելացել է շուրջ 6%-ով, իսկ մասնավոր ներդրումների ծավալները նախորդ տարվա համեմատ ավելացել են մոտ 4%-ով:

Մասնավոր ծախսումների աճի արդյունքում 2011 թ. երրորդ եռամսյակում մասնավոր ծախսումների ճեղքը, չնայած շարունակական փոքրացմանը, դեռևս մնացել է բացասական: Վերոնշյալ զարգացումների պայմաններում երրորդ եռամսյակում մասնավոր հատվածի կողմից իրականացվող ծախսումները գնաճի վրա էական ազդեցություն չեն ունեցել:

2011 թվականի երրորդ եռամսյակում շարունակվել է մակրոտնտեսական կայունության ապահովմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականության

իրականացումը, որը դրսևորվել է ծրագրվածին համապատասխան եկամուտների հավաքագրմամբ և պետական ծախսերի տնտեսումներով: Արդյունքում համախառն պահանջարկի, հետևաբար գնաճի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը կանխատեսված 0.8 ընդլայնողի դիմաց ունեցել է 0.5 տոկոսային կետ զսպող ազդեցություն: Դա պայմանավորված է եկամուտների գրեթե չեզոք և ծախսերի -0.5 զսպող ազդակներով:

Ընդհանուր առմամբ, ինն ամիսների արդյունքում ևս համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը ունեցել է զսպողական ազդեցություն:

Ներքին պահանջարկի և աշխատանքի շուկայի՝ վերը նշված զարգացումների պայմաններում տնտեսությունում 2011 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում նկատվել են գնանկումային ճնշումներ, որոնք, ըստ ՀՀ ԿԲ գնահատումների, կազմել են տ/տ 1.5 - 2 տոկոսային կետ:

2011 թ. երրորդ եռամսյակի ընթացքում ընթացիկ հաշվի զարգացումները ձևավորվել են համաշխարհային տնտեսության աճի տեմպերի դանդաղման և անորոշությունների ավելացման, մասնավորապես՝ Եվրոգոտու պարտքային ճգնաժամի հավանականության ներքո: Համաշխարհային և ներքին տնտեսությունների զարգացումներին համահունչ շարունակվել է ընթացիկ հաշվի բարելավման միտումը: Այսպես. 2011 թ. երրորդ եռամսյակում մետաղների միջազգային գների բարձր մակարդակի պահպանման և արդյունաբերության ճյուղի բարձր աճի պայմաններում ապրանքների արտահանման բարձր աճը շարունակվել է: Տնտեսական ակտիվության աճը հանգեցրել է ապրանքների ներմուծման դոլարային արտահայտությամբ և իրական ծավալների աճի, ինչը գերազանցել է սպասումները: Համաշխարհային տնտեսության զարգացումները, հատկապես՝ Ռուսաստանի տնտեսության բանկային համակարգում լարվածությունը, ցայտուն դրսևորվել են սեպտեմբերին, երբ ֆիզիկական անձանց բանկային համակարգով ոչ առևտրային փոխանցումների ներհոսքի աճի տեմպերը դանդաղել են: Այնուամենայնիվ, հուլիս-օգոստոս ամիսների բարձր աճի հաշվին երրորդ եռամսյակում պահպանվել է տրանսֆերտների բարձր աճը: Նշված զարգացումների արդյունքում ընթացիկ հաշվի պակասուրդը 2011 թ. երրորդ եռամսյակում տ/տ նվազել է 65.1 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 204.8 մլն ԱՄՆ դոլար: 2011 թ. հունվար-սեպտեմբերին ընթացիկ հաշվի պակասուրդի կշիռը ՀՆԱ-ում բարելավվել է 3.7 տոկոսային կետով:

Վերոնշյալ զարգացումներով էլ պայմանավորվել են երրորդ եռամսյակում գնաճի նպատակի իրագործման ընթացքը և դրամավարկային քաղաքականության ուղղությունները: Չնայած գնաճային միջավայրի թուլացմանը, համաշխարհային տնտեսությունում ձևավորված պարտքային հիմնախնդիրների սրման, ինչպես նաև որոշ պարենային և ոչ պարենային ապրանքների՝ սպասվածից բարձր գների ձևավորման պայմաններում ԿԲ-ն հուլիս-օգոստոս ամիսներին ձեռնպահ է մնացել տոկոսադրույքի փոփոխությունից: Այդուհանդերձ, գնաճի ընդհանուր մակարդակի նվազումը պայմանավորող հիմնական գործոնների գերակայող ազդեցության պարագայում եռամսյակի ավարտին դրամավարկային պայմանները որոշակի թուլացվել են՝ նպատակ ունենալով երրորդ եռամսյակին հաջորդող 12-ամսյա հորիզոնում գնաճը ձևավորել տատանումների թույլատրելի միջակայքի կենտրոնական արժեքին հնարավորինս մոտ: Վերջինս լրացուցիչ խթաններ կարող էր ստեղծել նաև տնտեսական ակտիվության որոշակի ավելացման համար:

Ինչպես և նախորդ եռամսյակում, երրորդ եռամսյակում ևս դրամավարկային քաղաքականության զարգացումները հիմնականում համահունչ են եղել ակնկալվող սցենարին: Այսպես, փողի զանգվածը երրորդ եռամսյակում ավելացել է 4.7%-ով, դրամային զանգվածը՝ 8.0%-ով, իսկ փողի բազան՝ 9.7%-ով: Տարեսկզբից տնտեսության դոլարայնացման աստիճանի շարունակաբար նվազող միտումները պահպանվել են նաև երրորդ եռամսյակում՝ նախորդ եռամսյակի նկատմամբ 1.7 և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ 1.5 տոկոսային կետով: Չնայած տարվա նախորդ երկու եռամսյակների համեմատ աճի տեմպերի որոշ չափով դանդաղմանը, այնուամենայնիվ, երրորդ եռամսյակում ևս պահպանվել է տնտեսության վարկավորման բարձր աճը՝ 6.2%:

2. ԳՆԱՃԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ


2.1. ԳՆԱՃՆ ԸՍՏ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ, ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ

2011 թ. սեպտեմբերին, 2010 թ. սեպտեմբերի նկատմամբ, գրանցվել է 6.2% գնաճ, ընդ որում՝ պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) ապրանքների գները բարձրացել են 9.4%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ 3.5, ծառայությունների սակագները՝ 2.2%-ով՝ նպաստելով գնաճի ցուցանիշին համապատասխանաբար 5.06, 0.55 և 0.67 տոկոսային կետով:

Գնաճին նպաստած հիմնական ապրանքախմբերը

Ապրանքախմբեր	Գների փոփոխություն (%)	Նպաստումը գնաճի ցուցանիշին (տոկոսային կետ)
Պարենային ապրանքներ		
Մսամթերք	14.0	1.42
Կաթնամթերք	22.7	0.96
Կենդանական և բուսական յուղ	19.8	0.64
Ձու	39.9	0.55
Հացամթերք	5.1	0.54
Սուրճ, թեյ, կակաո	14.3	0.51
Շաքարավազ	46.4	0.50
Միրգ	2.4	0.09
Բանջարեղեն	-8.6	-0.54
Ոչ պարենային ապրանքներ		
Անձնական օգտագործման մեքենաներ և վառելանյութ	11.9	0.29
Հագուստ և գործվածք	3.8	0.11
Ոսկերչական ապրանքներ	34.1	0.06
Ծառայություններ		
Բուժսպասարկման ծառայություններ	13.2	0.49
Տրանսպորտի ծառայություններ	8.2	0.27
Հանրային սննդի ծառայություններ	6.2	0.11
Կենցաղային բնույթի ծառայություններ	4.1	0.05
Բնակարանային, կոմունալ ծառայություններ	-1.0	-0.14

Սպառողական գների ինդեքսը 2011 թ. երրորդ եռամսյակում, 12-ամսյա կտրվածքով՝ ըստ հիմնական ապրանքային խմբերի և ծառայությունների



2011 թ. երրորդ եռամսյակում, նախորդ եռամսյակի վերջի համեմատ, սպառողական գների ինդեքսը նվազել է 2.8%-ով, ընդ որում՝ պարենային ապրանքների գները նվազել են 5.2%-ով (նպաստումը գնաճին՝ -2.77 տոկոսային կետ), ծառայությունների սակագները՝ 0.04%-ով, իսկ ոչ պարենային ապրանքների գները բարձրացել են 0.4%-ով:


2011 թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում, 2010 թ. հունվար-սեպտեմբերի համեմատ, գնաճը կազմել է 8.5%, ընդ որում՝ 2010 և 2009 թթ. համանման ցուցանիշները համապատասխանաբար կազմել էին 7.8 և 2.9%: Գնաճի

8.5% ցուցանիշը պայմանավորվել է պարենային ապրանքների 12.8%, ոչ պարենային ապրանքների 3.1%, ծառայությունների սակագների 4.0% աճով, որոնց ազդեցությունը գնաճի ընդհանուր ցուցանիշի վրա կազմել է համապատասխանաբար՝ 6.8, 0.5 և 1.2 տոկոսային կետ:

2011 թ. սեպտեմբերին, 2010 թ. դեկտեմբերի նկատմամբ, սպառողական ապրանքների գնաճը կազմել է 0.6%՝ ձևավորված պարենային ապրանքների 0.9% գնանկման, և ոչ պարենային ապրանքների 2.5% ու ծառայությունների սակագների 2.4% գնաճերի արդյունքում (նպաստումը գնաճի ցուցանիշին՝ համապատասխանաբար -0.5, 0.4 և 0.7 տոկոսային կետեր):

2011 թ. երրորդ եռամսյակում բնականոն գնաճի 12-ամսյա ցուցանիշը կազմել է 7.01%: Այդ ցուցանիշի վրա մեծ ազդեցություն են ունեցել «Տավարի միս» (նպաստումը՝ 1.0 տոկոսային կետ), «Ձու» (նպաստումը՝ 0.7 տոկոսային կետ), «Պանիր տնական (կովի կաթից)» (նպաստումը՝ 0.7 տոկոսային կետ), «Բենզին» (նպաստումը՝ 0.4 տոկոսային կետ), «Հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների ծառայություններ» (նպաստումը՝ 0.4 տոկոսային կետ), «Կարագ» (նպաստումը՝ 0.4 տոկոսային կետ), «Խոզի միս» (նպաստումը՝ 0.3 տոկոսային կետ), «Շաքարավազ» (նպաստումը՝ 0.3 տոկոսային կետ), «Օդային տրանսպորտով ուղևորների միջքաղաքային փոխադրման ուղեվարձ» (նպաստումը՝ 0.3 տոկոսային կետ), «Պանիր Չանախ» (նպաստումը՝ 0.3 տոկոսային կետ), «Աղացած միս» (նպաստումը՝ 0.2 տոկոսային կետ), ապրանքատեսակները[1]:

Գնաճի և բնականոն գնաճի շարժը 2006-2011 թթ.՝ 12-ամսյա կտրվածքով



Գնաճի տատանումների վիճակագրական վերլուծություն

Սպառողական գների ինդեքսի և սպառողական զամբյուղի առանձին ապրանքախմբերի գների ինդեքսների փոփոխությունների ուսումնասիրման և դրանց տատանումները պայմանավորող գործոնների բացահայտման նպատակով 2008 թվականի հոկտեմբերից մինչև 2011 թվականի սեպտեմբեր ժամանակահատվածի համար տարանջատվել և գնահատվել է վիճակագրության տեսության մեջ ընդունված երեք բաղադրատարրերի (տրենդի, սեզոնայնության և պատահական տարրի) ազդեցությունը[2]:

Հաշվարկները ցույց են տալիս, որ 2008 թ. հոկտեմբեր-2011 թ. սեպտեմբեր ժամանակահատվածում ***ՍԳԻ-ի*** վրա սեզոնայնության բաղադրատարրի ազդեցությունը կազմել է 61.8%, պատահական բաղադրատարրինը՝ 37.1%, տրենդային բաղադրատարրի ազդեցությունը՝ 1.1%, ընդ որում՝

[1] Բնականոն գնաճի հաշվարկման մանրամասն մեթոդաբանությունը ներկայացված է «ՀՀ կենտրոնական բանկի բանբեր, 2008 թ. 1-ին եռամսյակ» պարբերականում, «Բնականոն գնաճի հաշվարկման մեթոդաբանությունը ՀՀ-ում. Արտաքսման և ճշգրտման եղանակ» վերլուծական նյութում:

[2] Հաշվարկների մեթոդաբանությունը նկարագրվել է «Գնաճը Հայաստանի Հանրապետությունում. 1999 թ. 2-րդ կիսամյակ» պարբերականում:

2007թ. հոկտեմբեր-2010 թ. սեպտեմբեր ժամանակահատվածի նկատմամբ մեծացել են սեզոնայնության և պատահական բաղադրատարրերի ազդեցությունները՝ համապատասխանաբար՝ 1.7 և 1.8%-ով, իսկ տրենդային բաղադրատարրի ազդեցությունը նվազել է 3.5%-ով:

Պարենային ապրանքների գների ինդեքսի վրա 2008 թ. հոկտեմբեր-2011 թ. սեպտեմբեր ժամանակահատվածում սեզոնայնության բաղադրատարրի ազդեցությունը կազմել է 70.56%, ընդ որում՝ 2007 թ. հոկտեմբեր-2010 թ. սեպտեմբեր ժամանակահատվածի նկատմամբ այս բաղադրատարրի ազդեցությունը մեծացել է 7.3%-ով: Նույն ժամանակահատվածում նվազել են պատահական և տրենդային բաղադրատարրերի ազդեցությունները պարենային ապրանքների գների ինդեքսի վրա՝ համապատասխանաբար 3.3 և 4.0%-ով:

Ոչ պարենային ապրանքների գների ինդեքսի վրա պատահական բաղադրատարրի ազդեցությունը 2008 թ. հոկտեմբեր-2011 թ. սեպտեմբեր ժամանակահատվածում կազմել է 62.34% (2007 թ. հոկտեմբեր-2011 թ. սեպտեմբեր ժամանակահատվածի նկատմամբ այդ բաղադրատարրի ազդեցությունը նվազել է 5.7%-ով), իսկ սեզոնային բաղադրատարրի ազդեցությունն աճել է 5.7%-ով՝ կազմելով 37.66%:

Ծառայությունների գների ինդեքսի վրա սեզոնայնության և պատահական բաղադրատարրերը գրեթե հավասար ազդեցություն են ունեցել՝ համապատասխանաբար՝ 43.2 և 43.9%: 2007 թ. հոկտեմբեր-2010 թ. սեպտեմբեր ժամանակահատվածի նկատմամբ սեզոնայնության բաղադրատարրի ազդեցությունը նվազել է 17.5%-ով, իսկ պատահական և տրենդային բաղադրատարրերինը՝ աճել համապատասխանաբար 10.9% և 6.6%-ով:

Ենթաապրանքախմբերի գների ինդեքսների վերլուծությունները ցույց են տալիս, որ 2008 թ. հոկտեմբեր-2011 թ. սեպտեմբեր ժամանակահատվածում ***սեզոնայնության բաղադրատարրը*** ամենամեծն է եղել հետևյալ ենթաապրանքախմբերում՝ «Կրթության համակարգի ծառայություններ» (75.26%), «Բանջարեղեն և կարտոֆիլ» (72.74%), «Միրգ» (70.32%), «Կոշկեղեն» (63.59%), «Մշակույթի ապրանքներ» (57.03%), «Բնակարանային, կոմունալ ծառայություններ» (56.55%), «Կենդանական և բուսական յուղ» (54.18%), «Ձու» (53.37%): Նույն ժամանակահատվածում ***պատահական բաղադրատարրի*** ազդեցությունը մեծ է եղել հետևյալ ենթաապրանքախմբերում՝ «Ոսկերչական ապրանքներ» (83.47%), «Ոգելից խմիչք. (75.98%), «Տեքստիլեղեն» (75.74%), «Խոհանոցային սպասք» (75.51%), «Կապի ծառայություններ. (70.30%), «Այլ կենցաղային ծառայություններ» (69.75%), «Կենցաղային բնույթի ծառայություններ» (69.70%), «Հացամթերք» (69.27%): 2008 թ. հոկտեմբեր - 2011թ. սեպտեմբեր ժամանակահատվածում ***տրենդային բաղադրատարրի*** ազդեցությունը համեմատաբար մեծ է եղել «Այգեգործական ապրանքներ» (18.74%), «Գեղահարդարման ապրանքներ» (16.77%), «Անձնապիտո ապրանքներ» (12.53%), «Գրենական պիտույքներ» (11.79%), «Լվացող միջոցներ» (11.02%), «Հացամթերք» (10.81%) «Դեղամիջոցներ» (9.71%) ենթաապրանքախմբերում:

Գների ամսական ինդեքսների տատանումները պայմանավորող բաղադրատարրերի տեսակարար կշիռները (2008 թ. հոկտեմբեր - 2011 թ. սեպտեմբեր) (%)


Անվանում	Տրենդ	Սեզոնայնություն	Պատահական տարր	Ընդամենը
ՍԳԻ (նախորդ ամսվա նկատմամբ)				
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	**1.1**	**61.8**	**37.1**	**100.0**
Հացամթերք	**0.2**	**70.6**	**29.2**	**100.0**
Մսամթերք	10.8	19.9	69.3	100.0
Ձկնամթերք	8.6	29.6	61.8	100.0
Կաթնամթերք	5.0	32.1	62.9	100.0
Ձու	2.5	42.4	55.1	100.0
Կենդանական և բուսական յուղ	1.1	53.4	45.5	100.0

Միրգ	3.7	70.3	26.0	100.0
Բանջարեղեն և կարտոֆիլ	5.3	72.7	21.9	100.0
Շաքարավազ	2.0	50.8	47.2	100.0
Սուրճ, թեյ, կակաո	4.0	32.9	63.1	100.0
Հրուշակեղեն	1.3	35.9	62.8	100.0
Այլ մթերքներ	5.7	35.6	58.7	100.0
Ոչ ոգելից խմիչք	0.0	35.1	64.9	100.0
Ոգելից խմիչք և ծխախոտ	0.9	23.1	76.0	100.0
Ոչ պարենային ապրանքներ	**0.0**	**37.7**	**62.3**	**100.0**
Հագուստ և գործվածք	7.4	50.5	42.1	100.0
Կոշկեղեն	0.9	63.6	35.5	100.0
Վառելիք	8.5	46.5	45.0	100.0
Կահույք	5.6	51.8	42.6	100.0
Գորգեղեն	1.5	41.0	57.5	100.0
Տեքստիլեղեն	0.0	24.3	75.7	100.0
Կենցաղային էլեկտրաապրանքներ	4.8	31.6	63.6	100.0
Խոհանոցային սպասք	2.4	22.1	75.5	100.0
Լվացող միջոցներ	11.0	31.7	57.3	100.0
Շինանյութեր	8.8	29.2	62.0	100.0
Այգեգործական ապրանքներ	18.7	46.9	34.4	100.0
Դեղամիջոցներ	9.7	27.0	63.3	100.0
Անձնական օգտագործման մեքենաներ և վառելանյութ	6.4	28.2	65.4	100.0
Մշակույթի ապրանքներ	0.3	57.0	42.7	100.0
Գրենական պիտույքներ	11.8	42.7	45.5	100.0
Գեղահարդարման ապրանքներ	16.7	14.6	68.7	100.0
Ոսկերչական ապրանքներ	1.0	15.5	83.5	100.0
Անձնապիտո ապրանքներ	12.5	37.8	49.7	100.0
Ծառայություններ	**12.9**	**43.2**	**43.9**	**100.0**
Կենցաղային բնույթի ծառայություններ	1.1	29.2	69.7	100.0
Այլ կենցաղային ծառայություններ	0.9	29.3	69.8	100.0
Բնակարանային, կոմունալ ծառայություններ	3.7	56.6	39.7	100.0
Բուժսպասարկման ծառայություններ	0.1	34.1	65.8	100.0
Տրանսպորտի ծառայություններ	0.1	31.6	68.3	100.0
Կապի ծառայություններ	0.5	29.2	70.3	100.0
Մշակույթի ոլորտի ծառայությունները	7.9	29.5	62.6	100.0
Կրթության համակարգի ծառայությունները	0.5	75.3	24.2	100.0
Հանգստի կազմակերպման ծառայություններ	1.4	43.4	55.2	100.0
Հանրային սննդի ծառայություններ	5.3	29.7	65.0	100.0
Իրավական և բանկային ծառայություններ	0.0	31.8	68.2	100.0

Սպառողական գների ինդեքսների տատանողականությունն ուսումնասիրվել է նաև յուրաքանչյուր ապրանքախմբի գների ամսական ինդեքսների տատանողականության գործակիցների օգնությամբ:

Գծապատկերում արտացոլված են ՍԳԻ-ի և ապրանքախմբերի տատանողականության գործակիցների շարժերը, որոնք շատ նման են:

ՍԳԻ, պարենային ապրանքների, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գների ինդեքսների տատանողականության գործակիցները 2007- 2011 թթ. երրորդ եռամսյակներում



2011 թ. երրորդ եռամսյակում, 2010 թ. երրորդ եռամսյակի համեմատությամբ, աճել է ՍԳԻ տատանողականության գործակիցը՝ 1.1%–ից դարձել է 2.0%՝ պայմանավորված պարենային ապրանքների գների ինդեքսի տատանողականության գործակցի 1.4 տոկոսային կետ աճով: Վերջինս էլ պայմանավորվել է «Բանջարեղեն և կարտոֆիլ» (24.3%, 2010 թ. երրորդ եռամսյակում՝ 13.9%), «Միրգ» (12.2%, 2010 թ. երրորդ եռամսյակում՝ 2.8%) և «Շաքարավազ» (11.3%, 2010 թ. երրորդ եռամսյակում՝ 2.4%) ենթաապրանքախմբերի գների ինդեքսների տատանողականությունների աճով: Ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների ինդեքսների տատանողականություններն ընդհանուր առմամբ անփոփոխ են մնացել: Այս խմբերում աճել են «Կոշկեղեն» (2.8%, 2010 թ. երրորդ եռամսյակում՝ 1.4%), «Մշակույթի ապրանքներ» (4.0%, 2010 թ. երրորդ եռամսյակում՝ 1.5%), «Ոսկերչական ապրանքներ» (3.4%, 2010 թ. երրորդ եռամսյակում՝ 0.2%), «Հանգստի կազմակերպման ծառայություններ» (4.8%, 2010 թ. երրորդ եռամսյակում՝ 0.3%) ենթաապրանքախմբերի գների ինդեքսների տատանողականության գործակիցները:

Գների ամսական ինդեքսների տատանման գործակիցները 2007 - 2011 թթ. 3-րդ եռամսյակներում (%)


Անվանում	III եռ. 07	III եռ. 08	III եռ. 09	III եռ. 10	III եռ. 11
ՍԳԻ (նախորդ ամսվա նկատմամբ)	**1.9**	**1.4**	**1.7**	**1.1**	**2.0**
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	**3.3**	**2.6**	**2.8**	**2.0**	**3.4**
Հացամթերք	1.4	0.3	0.3	3.0	0.6
Մսամթերք	1.1	1.1	0.6	0.2	1.0
Ձկնամթերք	1.7	21.4	0.1	0.4	0.6
Կաթնամթերք	0.4	0.0	0.5	0.4	1.6
Ձու	3.8	1.7	7.0	9.8	2.3
Կենդանական և բուսական յուղ	4.1	0.2	0.9	1.2	0.1
Միրգ	4.5	10.1	17.6	2.8	12.2
Բանջարեղեն և կարտոֆիլ	20.2	19.4	18.2	13.9	24.3
Շաքարավազ	0.6	1.3	3.8	2.4	11.3
Սուրճ, թեյ, կակաո	0.0	0.3	0.4	0.2	0.4
Հրուշակեղեն	0.0	0.3	0.1	0.1	0.2
Այլ մթերքներ	0.1	0.7	0.2	0.0	0.1
Ոչ ոգելից խմիչք	0.0	0.0	0.1	0.0	0.1
Ոգելից խմիչք և ծխախոտ	0.0	0.0	0.1	0.0	0.3
Ոչ պարենային ապրանքներ	**0.1**	**0.4**	**0.5**	**0.4**	**0.4**
Հագուստ և գործվածք	0.2	0.4	1.0	1.1	1.2
Կոշկեղեն	0.2	0.1	4.7	1.4	2.8
Վառելիք	0.3	0.7	1.1	0.1	0.6
Կահույք	0.1	0.1	0.2	0.3	0.3
Գորգեղեն	0.0	0.0	0.1	0.5	0.1
Տեքստիլեղեն	1.0	0.1	0.4	0.2	0.1
Կենցաղային էլեկտրաապրանքներ	0.7	0.3	0.8	0.3	0.2
Խոհանոցային սպասք	0.0	0.8	1.1	0.1	0.1
Լվացող միջոցներ	0.1	0.6	2.3	0.1	0.1
Շինանյութեր	0.1	0.6	1.5	0.1	0.5
Այգեգործական ապրանքներ	0.7	0.5	0.0	0.3	0.6
Դեղամիջոցներ	1.1	0.1	0.0	0.2	0.3
Անձնական օգտագործման մեքենաներ և վառելանյութ	0.8	2.0	1.0	0.8	0.8
Մշակույթի ապրանքներ	0.8	1.5	0.2	1.5	4.0
Գրենական պիտույքներ	0.1	0.2	2.2	0.6	0.7
Գեղահարդարման ապրանքներ	0.3	0.1	0.4	0.1	0.3
Ոսկերչական ապրանքներ	0.4	4.1	0.5	0.2	3.4
Անձնապիտո ապրանքներ	0.1	1.2	1.9	0.7	0.3
Ծառայություններ	**0.5**	**0.3**	**0.6**	**0.2**	**0.2**
Կենցաղային բնույթի ծառայություններ	2.0	0.1	0.7	0.1	0.0
Այլ կենցաղային ծառայություններ	2.5	0.1	0.8	0.1	0.0
Բնակարանային , կոմունալ ծառայություններ	0.0	0.0	0.1	0.0	0.2
Բուժսպասարկման ծառայություններ	0.3	0.7	0.8	0.1	0.3
Տրանսպորտի ծառայություններ	0.2	0.4	1.2	1.1	0.7
Կապի ծառայություններ	0.0	1.0	0.0	0.0	0.4
Մշակույթի ոլորտի ծառայություններ	3.5	2.2	3.6	2.3	0.1
Կրթության համակարգի ծառայություններ	2.9	1.7	3.9	2.8	2.2
Հանգստի կազմակերպման ծառայություններ	1.1	0.3	1.4	0.3	4.8
Հանրային սննդի ծառայություններ	0.1	0.5	0.1	1.0	0.6
Իրավական և բանկային ծառայություններ	0.0	0.2	0.0	0.0	0.3

2.2. ԳՆԱՁԻ ՆՊԱՏԱԿԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

2011 թվականի երրորդ եռամսյակում շարունակվել են գնաճային միջավայրի մեղմման միտումները՝ պայմանավորված տարեսկզբից դրամավարկային պայմանների խստացման լագային ազդեցությամբ, արտաքին շուկաներում պարենային և հումքային ապրանքների գների որոշակի կայունացմամբ, իրականացված հարկաբյուջետային քաղաքականության զսպող ազդեցությամբ և նախորդ տարվա համեմատությամբ տեղական արտադրության գյուղմթերքների թողարկման ծավալների աճի պայմաններում դրանց գների նվազմամբ: Եռամսյակի ընթացքում արձանագրվել է 2.8% գնանկում, ինչի պայմաններում 12-ամսյա գնաճը կազմել է 6.2%: Նշենք, որ օգոստոսին այն իջել էր մինչև 4.8%՝ հայտնվելով տատանումների թույլատրելի միջակայքում, իսկ սեպտեմբերին կրկին բարձրացել է՝ պայմանավորված շաքարավազի և մի շարք պարենային ու ոչ պարենային ապրանքների շուկաներում հարկային վարչարարության խստացմամբ: Այդուհանդերձ, առաջիկա մեկ տարվա հորիզոնով գնահատվող արտաքին և ներքին մակրոտնտեսական զարգացումները և նախատեսված դրամավարկային քաղաքականության ակնկալվող ազդեցությունը վկայում են, որ հետագա մեկ տարվա հորիզոնում 12-ամսյա գնաճը կրկին կունենա աստիճանաբար նվազող հետագիծ և այդ ընթացքում կգտնվի տատանումների թույլատրելի միջակայքում:

Նշված համատեքստում, 2011 թ. երրորդ եռամսյակին նախորդող 12-ամսյա ժամանակահատվածի գնաճային միջավայրը և դրամավարկային քաղաքականության ուղղությունները բնութագրվել են հետևյալ հիմնական առանձնահատկություններով: 2010 թ. երկրորդ կիսամյակում ձևավորված բարձր գնաճային միջավայրը աստիճանաբար խորանալով՝ դրսևորվել է նաև 2011 թ. առաջին կեսին, քանի որ առկա գնաճային գործոններին ավելացել են բարձր գնաճի երկրորդային ազդեցություններն ու գնաճային սպասումները: Արդյունքում՝ չորրորդ եռամսյակում արձանագրվել է 4.4% գնաճ (վերջին 5 տարիների միջին ցուցանիշը՝ 3.4%), իսկ 2011 թ. առաջին եռամսյակի ընթացքում՝ 5.2% գնաճ (վերջին 5 տարիների միջին ցուցանիշը՝ 2.5%), որի պարագայում 12-ամսյա գնաճը մարտի վերջին կազմել է 11.5%՝ գերազանցելով նպատակային միջակայքի վերին սահմանագիծը 6.0 տոկոսային կետով:

12-ամսյա գնաճի կանխատեսված ցուցանիշը



Կանխատեսված գնաճի կենտրոնական արժեքներ՝ անփոփոխ վերաֆինանսավորման տոկոսադրույքի պարագայում

Չնայած բարձր գնաճային միջավայրին, 2010 թ. չորրորդ եռամսյակում ԿԲ-ն նպատակահարմար է համարել ձեռնպահ մնալ դրամավարկային պայմանների փոփոխությունից՝ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, որում գնաճային միջավայրը ձևավորվել է գերազանցապես առաջարկի գործոնների ազդեցությամբ: Հաշվի են առնվել նաև գնաճային միջավայրը մեղմող որոշ գործոններ՝ տարեսկզբից դրամավարկային պայմանների խստացումը, արտարժութային շուկայի զարգացումները և ներքին պահանջարկի՝ դեռևս գնաճային ճնշումներ չառաջացնող դանդաղ վերականգնումը: Արդյունքում՝ 2010 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ԿԲ-ն անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 7.25% մակարդակում: Այդուհանդերձ, հաշվի առնելով տարվա վերջին ամիսներին գնաճային ֆոնի ուժգնացումը, իր հրապարակումներում հստակ ազդակներ

է հաղորդել դրամավարկային պայմանների խստացման անհրաժեշտության վերաբերյալ:


Տարեսկզբին պահպանվող բարձր գնաճային ֆոնի ներքո ՀՀ ԿԲ կողմից արդեն 2011 թ. հունվարին և ապրիլին արված կանխատեսումները 2011 թ. երրորդ եռամսյակի համար ճշգրտվել են աճի ուղղությամբ՝ համապատասխանաբար 7.5% և 7.3%: Ընդ որում, հաշվի առնելով նախորդ տարի դրսևորված առաջարկի շոկի ազդեցության աստիճանական մարումն ու տարվա երկրորդ կեսից դրա ամբողջովին վերացումը, ինչպես նաև Դրամավարկային քաղաքականության 2011 թ. ծրագրով տարեսկզբից նախատեսվող դրամավարկային պայմանների խստացման լագային ազդեցությունը, նախորդ եռամսյակների կանխատեսումների համեմատ դրանք ունեն մեկ տարվա հորիզոնում առավել արագ տեմպերով նվազման հետագիծ: Գնաճի բարձր մակարդակների կանխատեսումները հիմնավորված էին նաև Համաշխարհային բանկի պարենի ինդեքսի աճողական վարքագծով. սեպտեմբերի 14.0%-ից տարեվերջին այն ունեցել է թռիչքային աճ՝ դեկտեմբերի վերջին հասնելով 25.3%-ի, իսկ 2011 թ. մարտի վերջին՝ շուրջ 35.0%-ի:

Ստեղծված իրավիճակում 2011 թ. սկզբից ՀՀ ԿԲ-ն աստիճանաբար խստացրել է դրամավարկային պայմանները՝ հունվար-ապրիլ ժամանակահատվածում բարձրացնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը 1.25 տոկոսային կետով և հասցնելով 8.5%-ի:

Երկրորդ և երրորդ եռամսյակներում գնաճային միջավայրը որոշակիորեն մեղմվել է. ապրանքային ու հումքային միջազգային շուկաներում ձևավորվել է գների հարաբերական կայունություն, ինչն ուղեկցվել է նաև ՀՀ տնտեսությունում ոչ գնաճային զարգացումներով՝ հիմնականում պայմանավորված գների վրա աշխատանքի շուկայի ու մասնավոր ծախսումների չեզոք և հարկաբյուջետային քաղաքականության զսպող ազդեցությամբ: Այս պարագայում, երկրորդ և երրորդ եռամսյակներում գրանցվել է համապատասխանաբար 1.6% և 2.8% գնանկում, ինչի արդյունքում 12-ամսյա գնաճը մարտի վերջի 11.5%-ից սեպտեմբերի վերջին նվազել է մինչև 6.2%: Ընդ որում, վերջինիս շարունակել է մեծապես նպաստել պարենային ապրանքների գների աճը՝ 5.0 տոկոսային կետ, որը հիմնականում պայմանավորվել է «Մսամթերք» «Կաթնամթերք» ապրանքախմբերի, ինչպես նաև ձվի և շաքարավազի գնաճով:

Եռամսյակի ընթացքում դեռևս պահպանվել է 12-ամսյա բնականոն գնաճի բարձր մակարդակ՝ 7.0%՝ նույնպես պայմանավորված վերոնշյալ գնաճային գործոններով:

Բնականոն գնաճի և ընդհանուր գնաճի 12-ամսյա շարժը



2011 թ. ապրիլից արդեն, հաշվի առնելով գնաճային միջավայրի մեղմման փաստացի միտումները և նախորդ տարվա համեմատությամբ տեղական արտադրության գյուղմթերքների ծավալների աճի պայմաններում դրանց գների նվազման սպասումները, ԿԲ խորհուրդը գնահատում էր, որ առավել իրատեսական է դառնում կանխատեսվող ժամանակային հորիզոնում 4%±1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում 12-ամսյա գնաճի

ձևավորումը և գնաճային միջավայրի կրկին ընդլայնման հավանականությունը բավականին ցածր է, ինչը ենթադրում էր, որ ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքների միջոցով հնարավոր է առկա գնաճային միջավայրի զսպումը: Ելնելով դրանից՝ ՀՀ ԿԲ-ն մայիս-օգոստոսին անփոփոխ է թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը, իսկ սեպտեմբերին՝ իջեցրել 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով 8.0%:

3. ԳՆԱՃԻ ԳՈՐԾՈՆՆԵՐ

3.1. ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ


Զարգացած երկրների պարտքային հիմնախնդիրների քաղաքական լուծումների ձգձգման պայմաններում երրորդ եռամսյակում համաշխարհային տնտեսական աճի հեռանկարը ավելի վատացավ: Այսպես, ԱՄՀ-ն սեպտեմբերին հրապարակած համաշխարհային տնտեսության հեռանկարի վերաբերյալ զեկույցում 2011 թ. համաշխարհային տնտեսական աճը գնահատել է 4%՝ նվազեցնելով ցուցանիշը 0.3 տոկոսային կետով[3]: Նվազեցումը հիմնականում պայմանավորված է զարգացած երկրների տնտեսական աճի դանդաղմամբ, որի գնահատականը 2011 թ. համար նվազեցվել է 0.6 տոկոսային կետով, ինչպես նաև զարգացող երկրների տնտեսական աճի 0.2 տոկոսային կետ նվազմամբ: 2011 թ. զարգացած երկրների գնաճը գնահատվել է 2.6%, իսկ զարգացող երկրներինը՝ 7.5%:

Համաշխարհային տնտեսական աճի՝ նվազման ուղղությամբ կանխատեսումների պարագայում ռիսկերը շարունակում են մնալ նվազման ուղղությամբ՝ պայմանավորված զարգացած երկրների հիմնախնդիրների և հարկաբյուջետային կոնսոլիդացման անհրաժեշտության պայմաններում քաղաքական երկփեղկումների և զարգացող երկրներում արտաքին պահանջարկի անկման հնարավոր ազդեցություններով:

2011 թ. երրորդ եռամսյակում միջազգային ապրանքային շուկաներում դրսևորվել են գների նվազման և կայունացման միտումներ՝ հիմնականում պայմանավորված համաշխարհային տնտեսական ակտիվության որոշակի նվազմամբ: Ընդ որում, եռամսյակի ընթացքում գների կայունացման միտումներ են դիտարկվել ինչպես հիմնական հումքային, այնպես էլ պարենային ապրանքների շուկաներում:

ԱՄՆ-ի և Եվրոգոտու պարտքային խնդիրների լուծման ուղղությամբ լարված քաղաքական քննարկումների ներքո երրորդ եռամսյակում ֆինանսական շուկաներում արձանագրվել է բարձր տատանողականություն: Այսպես, եռամսյակը նշանավորվել է զարգացած երկրներում տնտեսական զարգացումներին և քաղաքականության որոշումներին առնչվող մի շարք իրադարձություններով, որոնք հանգեցրին օգոստոսին ԱՄՆ Կոնգրեսի կողմից պարտքի վերին սահմանաչափի բարձրացմանը, ԱՄՆ բյուջեի պակասուրդի՝ պետական ծախսերի կրճատման միջոցով նվազեցման վերաբերյալ որոշմանը, «Ստանդարտ ընդ Փուրս» վարկանշային կազմակերպության կողմից ԱՄՆ կառավարության վարկանիշի իջեցմանը (AAA-ից՝ AA+), Եվրոգոտում պարտքային հիմնախնդիրների առավել սրմանը: Վերոնշյալ զարգացումների պայմաններում տվյալ եռամսյակում ԱՄՆ դոլարը եվրոյի նկատմամբ միջինում արժևորվել է եռ/եռ 1.9%-ով՝ կազմելով 1.41 ԱՄՆ դոլար՝ 1 եվրոյի դիմաց (ԱՄՆ դոլարի տ/տ արժեզրկումը կազմել է 8.5%):

2011 թ. երրորդ եռամսյակում ԱՄՆ դոլարի շարժը




[3] *"World Economic Outlook Update", IMF, September, 2011.*

2011 թ. երրորդ եռամսյակում նավթի գները եռ/եռ նվազել են 3.9%-ով, և «Բրենթ» տեսակի հում նավթի մեկ բարելի միջին եռամսյակային գինը կազմել է 112 ԱՄՆ դոլար (տ/տ աճը կազմել է 47.2%):

Երրորդ եռամսյակում հիմնականում դրսևորել են արդյունաբերական մետաղների գների նվազման միտումներ՝ պայմանավորված համաշխարհային տնտեսական աճի տեմպերի որոշակի դանդաղմամբ, մինչդեռ թանկարժեք մետաղների գները հասել են պատմական նոր բարձրակետերի: Լոնդոնի մետաղների բորսայում գնանշվող պղնձի գինը երրորդ եռամսյակում նվազելով եռ/եռ 1.8 %-ով՝ կազմել է միջինը շուրջ 9003 ԱՄՆ դոլար՝ տոննայի դիմաց (տ/տ աճը՝ 24%), իսկ ոսկու միջին եռամսյակային գինը նախորդ եռամսյակի համեմատ բարձրացել է 13%-ով՝ կազմելով 1703 ԱՄՆ դոլար՝ 1 տրոյական ունցիայի դիմաց (տ/տ աճը՝ 38.9%):

Երրորդ եռամսյակում միջազգային ապրանքային շուկաներում դրսևորվել են գների կայունացման միտումներ



Պարենային ապրանքների գները հիմնականում կայունացել են, և Պարենի ու գյուղատնտեսության կազմակերպության (FAO) կողմից հրապարակվող պարենի գների ինդեքսը երրորդ եռամսյակում, նախորդ եռամսյակի համեմատ, միջինը նվազել է 1.95%-ով: Չիկագոյի ապրանքահումքային բորսայում ցորենի եռամսյակային միջին գինը կազմել է շուրջ 8.6 ԱՄՆ դոլար՝ մեկ բուշելի դիմաց (նախորդ եռամսյակի միջին ցուցանիշի համեմատ նվազել է 6.9%-ով), որի պայմաններում երրորդ եռամսյակում տ/տ աճը կազմել է 32.7% (երկրորդ եռամսյակում՝ տ/տ 91.1%): Ըստ ԱՄՆ Գյուղդեպարտամենտի նոյեմբերի գնահատումների՝ 2011/2012 մարքեթինգային տարում սպասվում է մոտ 683 մլն տոննա ցորենի բերք՝ նախորդ՝ 2010/2011 տարում գրանցված շուրջ 648 մլն տոննայի փոխարեն (5.4% աճ): Կանխատեսվող պահանջարկի՝ 676.8 մլն տոննայի պարագայում ցորենի համաշխարհային պաշարները նախորդ տարվա համեմատ կավելանան՝ կազմելով 202.6 մլն տոննա, և հացահատիկի շուկայում գնաճային ճնշումներ չեն նկատվի:

Բրնձի միջազգային գինը սույն եռամսյակում բարձրացել է 13.9%-ով և կազմել 17.1 ԱՄՆ դոլար՝ մեկ ամերիկյան ցենտների (45.4 կգ) համար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը գերազանցել է 52%-ով:

Նախորդ եռամսյակի կտրուկ նվազումից հետո երրորդ եռամսյակում արձանագրվել է շաքարավազի գների եռ/եռ 17% աճ, որի պարագայում, սակայն, շաքարավազի գնի տ/տ աճը նախորդ եռամսյակի նույն ցուցանիշի նկատմամբ նվազել է՝ կազմելով 42%:

Ստորև ներկայացվում են համաշխարհային տնտեսության մեծ մասը կազմող և ՀՀ հիմնական գործընկեր երկրների՝ ԱՄՆ-ի, Եվրոգոտու և Ռուսաստանի տնտեսական զարգացումները: Այնուհետև կներկայացվեն տարածաշրջանի հարևան երկրների տնտեսական զարգացումները:

Չնայած ***ԱՄՆ-ում*** 2011 թվականի երրորդ եռամսյակում տնտեսական աճի տեմպերը նկատելիորեն վերականգնվել են, տնտեսական աճին նպաստող գործոնների կառուցվածքը ցույց է տալիս, որ տնտեսությունը դեռևս չի անցել կա-


յուն զարգացման փուլին, և միջնաժամկետ հատվածում նվազման ուղղությամբ ռիսկերը չեն վերացել: Այսպես, ըստ ԱՄՆ առևտրի դեպարտամենտի տնտեսական վերլուծությունների բյուրոյի նախնական գնահատումների՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում երրորդ եռամսյակում գրանցվել է եռ/եռ տարեկանացված 2.5% տնտեսական աճ (նախորդ եռամսյակում՝ 1.3% աճ): Տնտեսական աճին նպաստող հիմնական գործոններն են եղել սպառողական ծախսերը (1.72 տոկոսային կետ նպաստմամբ), համախառն մասնավոր ներդրումները (0.52 տոկոսային կետ նպաստմամբ), զուտ արտահանումը (0.22 տոկոսային կետ նպաստմամբ): Մինչդեռ պետական հատվածի ծախսերի և ներդրումների անկման ազդեցությունը տնտեսական աճի վրա եղել է զրոյական:

2011 թ. երրորդ եռամսյակում ԱՄՆ զուտ արտահանման պակասուրդը ՀՆԱ-ում փոքր-ինչ նվազել է՝ կազմելով 3.8%՝ նախորդ եռամսյակում արձանագրված 4%-ի փոխարեն: Այնուամենայնիվ, այս ցուցանիշը բարձր է նախորդ տարվա նույն եռամսյակում արձանագրված 3.7% արժեքից: Հաշվետու եռամսյակում զուտ արտահանման պակասուրդի կրճատումը տեղի է ունեցել ներմուծման նկատմամբ արտահանման թե՛ արժեքային և թե՛ իրական արտահայտությամբ առաջանցիկ աճի տեմպի հաշվին:

2011 թվականի երկրորդ եռամսյակում միջին եռամսյակային գնաճը կազմել է տ/տ 3.8 %՝ նախորդ եռամսյակի տ/տ 3.4 % գնաճի փոխարեն: Գնաճային միջավայրի ձևավորմանը հիմնականում նպաստել են վառելիքի, տրանսպորտային միջոցների, պարենային ապրանքների և տարբեր ծառայությունների գների աճը:

2011 թ. երրորդ եռամսյակում ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը քաղաքականության նպատակային տոկոսադրույքը պահպանել է 0-0.25 տոկոս միջակայքում: Միևնույն ժամանակ, շուկաների կողմից սպասված երրորդ քանակական ընդլայնման փոխարեն հայտարարել է «ժամկետայնության երկարաձգման ծրագրի» մասին, ըստ որի՝ մինչև 2012 թ. հունիս կգնի երկարաժամկետ գանձապետական պարտատոմսեր և փոխարենը կվաճառի նույն ծավալի կարճաժամկետ պարտատոմսեր: Այս ծրագրի նպատակն է երկարաժամկետ տոկոսադրույքի նվազեցումը և տնտեսական աճի խթանումը:

2011 թ. երրորդ եռամսյակում ԱՄՆ-ում գնաճը շարունակել է արագանալ




Համաձայն Եվրոստատի նախնական գնահատումների՝ ***Եվրոգոտում*** 2011 թ. երրորդ եռամսյակում, նախորդ եռամսյակի համեմատ, գրանցվել է 0.2% տնտեսական աճ: Նման պայմաններում տ/տ տնտեսական աճի տեմպերը դանդաղել են՝ կազմելով 1.4% (նախորդ եռամսյակում՝ եռ/եռ և տ/տ աճերը կազմել են համապատասխանաբար 0.2% և 1.6%):

Սպառողական գների ինդեքսը 2011 թ. երրորդ եռամսյակում միջինը աճել է տ/տ 2.7%-ով (նախորդ եռամսյակում արձանագրվել էր 2.8% գնաճ): Եվրոգոտում գնաճն առավելապես պայմանավորվել է վառելիքի և էլեկտրաէներգիայի գների աճով, մինչդեռ փոքր նվազեցնող ազդեցություններ է ապահովել կապի, վարձակալության ծառայությունների և հագուստեղենի գների անկումը:

Գնաճային սպասումները խարսխելու նպատակով եռամսյակի սկզբին բարձրացնելով տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով և սահմանելով 1.5%՝ Եվրոպական կենտրոնական բանկը հաջորդող երեք ամիսներին տոկոսադրույքը թողել է անփոփոխ:

Եվրոգոտում 2011 թ. երրորդ եռամսյակում գնաճի ցուցանիշի մակարդակը բարձր է մնացել



Ռուսաստանի տնտեսության վերականգնողական աճը 2011 թ. երրորդ եռամսյակում արագացել է. արձանագրվել է տ/տ 5.1% աճ՝ նախորդ եռամսյակի 3.7% աճի փոխարեն: Նման աճը մասամբ պայմանավորվել է նաև նախորդ տարվա երրորդ եռամսյակում գրանցված ցածր աճով: Հունվար-սեպտեմբեր ամիսներին տնտեսական աճը կազմել է 4.2%: Միևնույն ժամանակ, տնտեսական զարգացման նախարարությունը գնահատում է, որ չորրորդ եռամսյակում աճի տեմպերը կդանդաղեն մինչև 3.8 - 3.9%: Այս ցուցանիշի ներքո գնահատվում է, որ ներդրումների բարձր աճը կշարունակվի: Տնտեսական աճի տեմպերը արագացել են գրեթե բոլոր ճյուղերում, իսկ շինարարության և գյուղատնտեսության ճյուղերում գրանցվել են աճի բարձր տեմպեր: Մասնավորապես՝ շինարարության ճյուղում երկարաժամկետ դադարից հետո երրորդ եռամսյակում արձանագրվել է բավականին բարձր՝ տ/տ 15.5% աճ, իսկ գյուղատնտեսությունում՝ տ/տ 16.5% աճ: Մանրածախ առևտրի ճյուղում երրորդ եռամսյակում արձանագրվել է տ/տ 7.6% աճ, արդյունաբերության ճյուղում աճը շարունակվել է և ընթացիկ եռամսյակում կազմել է տ/տ 5.1%:

2011 թ. երրորդ եռամսյակը բնութագրվել է գրեթե զրոյական գնաճով՝ ռուբլու արժեզրկման պայմաններում, ինչը գնաճի 2011 թ. երկրորդ եռամսյակի տ/տ 9.6% ցուցանիշը երրորդ եռամսյակում հասցրել է մինչև տ/տ 8.1%-ի: Վերջինս հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների կազմում գյուղմթերքների գների նվազմամբ: Ոչ պարենային ապրանքների գների և վճարովի ծառայությունների սակագների աճը եռամսյակի ընթացքում արագացել է: Գնաճի նման զարգացումների պահպանման պարագայում գնահատվում է, որ մինչև տարեվերջ գնաճը ցածր կլինի 7.0%-ից:

2011 թ. երրորդ եռամսյակում նավթի միջազգային գների նվազման, ներքին տնտեսության և միջազգային ֆինանսական շուկաների զարգացումների ներքո կապիտալի մեծածավալ զուտ արտահոսքի պայմաններում ընթացիկ հաշվի հավելուրդը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է: Երրորդ եռամսյակում ընթացիկ հաշվի հավելուրդը կազմել է 17.3 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն եռամսյակի 5.5 մլրդ ԱՄՆ դոլարի փոխարեն: Առևտրային հաշվեկշռի հավելուրդի 16.2 մլրդ ԱՄՆ դոլարով աճն ավելի քան փոխհատուցել է մնացած հոդվածների գծով զուտ արտահոսքի աճը: Կապիտալի զուտ արտահոսքը երրորդ եռամսյակի ընթացքում ավելացել է և կազմել 21.6 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա երրորդ եռամսյակի 6.7 մլրդ ԱՄՆ դոլար զուտ արտահոսքի փոխարեն: Ընդ որում՝ բանկերի կողմից կապիտալի զուտ արտահոսքը կազմել է 4.6 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ այլ մասնավոր հատվածի կողմից՝ 16.8 մլրդ ԱՄՆ դոլար: Կապիտալի զուտ արտահոսքի ծավալները գերազանցել են ընթացիկ հաշվի հավելուրդը, որի արդյունքում Ռուսաստանի կենտրոնական բանկի արտարժութային պահուստները երրորդ եռամսյակում նվազել են 1.8 մլրդ ԱՄՆ դոլարով («Սխալ-

ներ և բացթողումներ» հոդվածով զուտ ներհոսքը կազմել է 2.5 մլրդ ԱՄՆ դոլար): 2011 թ. սեպտեմբերի վերջի դրությամբ արտաքին պահուստները կազմել են 516.8 մլրդ ԱՄՆ դոլար:

2011 թ. երրորդ եռամսյակի ընթացքում միջազգային ֆինանսական շուկաների անկայունության, օգոստոսից՝ նավթի միջազգային գների նվազման, իսկ սեպտեմբերից՝ արդեն կապիտալի արտահոսքի պայմաններում ռուբլու փոխարժեքի հետագա վարքագծի սպասումների անորոշություններն ավելացել են: Նշված զարգացումներն ավելացրել են ճնշումները ռուբլու փոխարժեքի վրա, ինչը նպաստել է արտարժույթի նկատմամբ պահանջարկի աճին և ռուբլու թուլացմանը: Այսպիսի միջավայրում Ռուսաստանի կենտրոնական բանկը արտարժութային շուկայում իրականացրել է արտարժույթի վաճառքի գործառնություններ, որի զուտ ծավալները կազմել են 2.8 մլրդ ԱՄՆ դոլար: Արդյունքում՝ երրորդ եռամսյակի ընթացքում ռուբլու միջին անվանական փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ եռ/եռ արժեզրկվել է 4.2%-ով, իսկ նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ դեռևս մնում է տ/տ 4.8%-ով արժևորված:

Դրամավարկային քաղաքականությունը երրորդ եռամսյակի ընթացքում ձևավորվել է ներքին և արտաքին ֆինանսական շուկաներում լարվածության ֆոնի ներքո: Որպես արդյունք՝ բանկային հատվածում առաջ են եկել իրացվելիության և վստահության խնդիրներ: Նշված խնդիրներն առավել սրվել են սեպտեմբերին, երբ բանկային ավելցուկ պահուստները օգոստոսի համեմատ նվազել են 11.0%-ով: Նշված ժամանակահատվածում Ռուսաստանի կենտրոնական բանկը, ֆինանսների նախարարության հետ համատեղ, ակտիվացրել է վերաֆինանսավորումը: Այսպես. ֆինանսների նախարարության ավանդները վարկային կազմակերպություններում սեպտեմբերին ավելացել են 0.4 տրլն ռուբլով, իսկ Կենտրոնական բանկի կողմից վարկային կազմակերպությունների համախառն վարկավորումը՝ 0.2 տրլն ռուբլով:

2011 թ. սեպտեմբերին Ռուսաստանի կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է ընդունել անփոփոխ թողնել վերաֆինանսավորման տոկոսադրույքը, 0.25 տոկոսային կետով բարձրացնել ավանդային գործարքների տոկոսադրույքը և 0.25 տոկոսային կետով նվազեցնել իրացվելիության տրամադրման առանձին գործարքների տոկոսադրույքները: Իրացվելիության տրամադրման և ներքաշման առանձին գործարքների միջև տոկոսադրույքների միջակայքի նեղացումը պետք է նպաստի դրամական շուկայում տոկոսադրույքների տատանողականության նվազմանը՝ իրացվելիության անբավարարության ռիսկի առաջացման պայմաններում:

Մակրոտնտեսական իրավիճակը հարևան երկրներում [4]

Թուրքիա. *2011 թ. երկրորդ եռամսյակում տնտեսության [5] բարձր աճը (տ/տ 8.8%) շարունակվել է՝ գերազանցելով կանխատեսված ցուցանիշը: Տնտեսական ակտիվության աճի տեմպերը չնայած դանդաղել են, այնուամենայնիվ, դեռևս մնում են բարձր: Մասնավոր հատվածի սպառումն ու ներդրումային ծախսերը տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժն են հանդիսացել. 2011 թ. երկրորդ եռամսյակում ավելացել են համապատասխանաբար տ/տ 9.2%-ով և տ/տ 33.5%-ով: Համաշխարհային տնտեսության զարգացումների ազդեցությամբ արծանագրվել է արտահանման ցածր մակարդակ, իսկ ներմուծումը նախորդ ամիսների համեմատ զգալի նվազել է՝ պայմանավորված*

[4] *Հարևան երկրների տնտեսությունների ուսումնասիրումը կարևորվում է այն առումով, որ, ենթարկվելով նույնանման ցնցումների, կարող են անուղղակի ազդել Հայաստանի տնտեսության վրա: 1990-ական թվականների ճգնաժամերը ցույց տվեցին, որ ազդեցության անուղղակի ուղիները՝ արտահանման միևնույն շուկաները, վարկավորող միևնույն կազմակերպությունները կամ երկրները, միևնույն ներդրողները և այլն, ավելի ու ավելի մեծ դերակատարում են ունենում տարածաշրջանային տեսանկյունից երկրների տնտեսությունների զարգացումների վրա: Հետևաբար երկրները մշտապես ուշադրություն են դարձնում ոչ միայն գործընկեր, այլ նաև տարածաշրջանային հարևան երկրների մակրոտնտեսական զարգացումների վրա: Ավելացնենք նաև, որ Իրանը ներառված չէ այն պատճառով, որ վերջինիս թվային տվյալները թերի են, ինչպես նաև ստացվում են բավականին ուշ, երբ կորցնում են հրատապությունը:*

[5] *2011 թ. երրորդ եռամսյակի տնտեսական աճի պաշտոնական տվյալները բացակայում են:*

տնտեսական քաղաքականության համապատասխան միջոցառումների ներքո ներքին պահանջարկի դանդաղմամբ: Այդպիսով, զուտ արտաքին պահանջարկը երկար ժամանակահատվածից հետո ունեցել է դրական նպաստում:

Տնտեսության ճյուղերում դրսևորվել են հետևյալ զարգացումները. վերամշակող արդյունաբերությունում երկրորդ եռամսյակում գրանցվել է տ/տ 8.0% աճ, մինչդեռ հանքարդյունաբերության ճյուղում աճի տեմպերը զգալի նվազել են, և տ/տ աճը կազմել է 1.2%: Մանրածախ ու մեծածախ առևտրի և շինարարության ճյուղերում աճի բարձր տեմպերը պահպանվել են և համապատասխանաբար կազմել տ/տ 13.0% և տ/տ 13.2%:

Ընդհանուր քաղաքականությունների լագային ազդեցությունների ներքո ներքին պահանջարկի դանդաղումը շարունակվել է երրորդ եռամսյակում: Միաժամանակ, բանկային կարգավորման ու վերահսկողության և կոշտ հարկաբյուջետային քաղաքականության միջոցառումների արդյունքում ներքին պահանջարկի աճը երրորդ եռամսյակում հասցվել է կայուն մակարդակի: Այս ժամանակահատվածում վարկավորումը, արտադրության և վաճառքի ծավալների վիճակագրական տվյալները, ինչպես նաև վստահության ինդեքսները արդեն իսկ նախանշում են մասնավոր հատվածի սպառողական պահանջարկի թուլացման մասին:

Ընթացիկ հաշվի ճշգրտումն արդեն նկատելի է դարձել. երրորդ եռամսյակում, նախորդ եռամսյակի համեմատ, արձանագրվել է ընթացիկ հաշվի պակասուրդի նվազում, սակայն բարձր մակարդակը դեռևս պահպանվել է: Այսպես՝ ընթացիկ հաշվի պակասուրդը հուլիս-օգոստոսին կազմել է 9.25 մլրդ ԱՄՆ դոլար (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 6.6 մլրդ ԱՄՆ դոլար): Հունվար-օգոստոսին ընթացիկ հաշվի պակասուրդը մոտ երկու անգամ բարձր է եղել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մակարդակից՝ առաջին կիսամյակում արձանագրված ցուցանիշի բարձր մակարդակի հաշվին: Արտահանման աճը հուլիս-օգոստոսին կազմել է տ/տ 27.6%, իսկ ներմուծման աճը՝ տ/տ 36.1%:

Հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում կապիտալի զուտ ներհոսքը դանդաղել է՝ կազմելով 4.2 մլրդ ԱՄՆ դոլար: Ընդ որում՝ բանկային ոլորտում միջոցների զուտ արտահոսքը կազմել է 1.7 մլրդ ԱՄՆ դոլար, մինչդեռ այլ մասնավոր հատվածում (առանց բանկերի) գրանցվել է 2.1 մլրդ ԱՄՆ դոլարի զուտ ներհոսք: «Տաք փողերի» զուտ ներհոսքը հուլիս-օգոստոսին կազմել է 0.5 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 6.1 մլրդ ԱՄՆ դոլարի փոխարեն: Օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ ներհոսքը նույն ժամանակահատվածում կազմել է 3.5 մլրդ ԱՄՆ դոլար: Նշենք, որ հունվար-օգոստոսին կապիտալի զուտ ներհոսքը կազմել է 51.2 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 35.7 մլրդ ԱՄՆ դոլարի փոխարեն: Երրորդ եռամսյակի վճարային հոսքերի արդյունքում կապիտալի զուտ ներհոսքը բավարար չի եղել ընթացիկ հաշվի պակասուրդը ֆինանսավորելու համար, որի արդյունքում Թուրքիայի կենտրոնական բանկի պահուստային ակտիվները տարվա սկզբից առաջին անգամ նվազել են 4.2 մլրդ ԱՄՆ դոլարով («Սխալներ և բացթողումներ» հոդվածով գրանցվել է 0.8 մլրդ ԱՄՆ դոլարի զուտ ներհոսք):

Համաշխարհային տնտեսության նոր կանխատեսումների ու սպասումների ներքո, կապիտալի ներհոսքի դանդաղման պարագայում թուրքական լիրայի արժեզրկման տեմպերը կտրուկ արագացել են: Այսպես՝ երրորդ եռամսյակում թուրքական լիրայի միջին փոխարժեքն արժեզրկվել է եռ/եռ 11.0%-ով, իսկ տ/տ արժեզրկումը կազմել է 14.5%:

Թուրքական լիրայի արժեզրկումն արտացոլվել է գնաճի զարգացումներում. 2011 թ. երրորդ եռամսյակում վերջինիս տեմպերն արագացել են, և միջին գնաճը կազմել է տ/տ 6.4%՝ նախորդ եռամսյակում արձանագրված տ/տ 5.9%-ի փոխարեն: Պարենային ապրանքների կազմում ներառված՝ չմշակված սննդի գները զգալի նվազել են՝ կրելով նաև նախորդ տարվա նույն ժամանակահատվածի բարձր աճի ազդեցությունը: Այնուամենայնիվ, փոխարժեքի զարգացումները գերակայել են, ինչն էլ հանգեցրել է կանխատեսված գնաճից բարձր գնաճի ձևավորմանը:

2011 թ. երրորդ եռամսյակի ընթացքում Թուրքիայի կենտրոնական բանկը պահպանել է բազմակի գործիքների կիրառմամբ դրամավարկային քաղաքականության ընթացքը: Թուրքիայի կենտրոնական բանկը օգոստոսի 4-ին որոշում է ընդունել նվազեցնել քաղաքականության տոկոսադրույքը (մեկշաբաթյա ռեպո տոկոսադրույքը 6.25%-ի փոխարեն սահմանել է 5.75%): Միաժամանակ, մեկօրյա ներգրավման տոկոսադրույքը 1.5%-ից բարձրացրել է մինչև 5.0%, իսկ մեկօրյա տրամադրման տոկոսադրույքը թողել է անփոփոխ: Նշված որոշումն իրականացվել է Եվրոպական երկրներում սուվերեն պարտքի հիմնախնդիրների սրման և համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարների վատացման ներքո: Կարճաժամկետ տոկոսադրույքների տա-

տանողականության սահմանափակման նպատակով Դրամավարկային կոմիտեն որոշել է նվազեցնել ներգրավման և տրամադրման տոկոսադրույքների միջև ճեղքը, իսկ ռեպո տոկոսադրույքի նվազեցումը նպատակաուղղված է եղել ներքին տնտեսության հնարավոր ռեցեսիոն ռիսկերի նվազեցմանը: Միաժամանակ, Դրամավարկային քաղաքականության կոմիտեի սեպտեմբերի 20-ի որոշման մեջ նշվում է, որ գների աճը կարճաժամկետ հատվածում կարող է շարունակվել, այնուամենայնիվ, տնտեսական ակտիվության նվազման պայմաններում սպասվում է, որ փոխարժեքի երկրորդային ազդեցությունները սահմանափակ կլինեն, և այդպիսով գների աճը կլինի ժամանակավոր: Միևնույն ժամանակ, երրորդ եռամսյակի ընթացքում նվազեցվել է արտարժութային պահուստավորման նորմատիվը:

Ադրբեջանի տնտեսությունում *2011 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին շարունակվել է իրական ՀՆԱ աճի ընդհանուր տեմպերի դանդաղումը, իսկ ոչ նավթային հատվածի ՀՆԱ աճի տեմպերի՝ արագացումը: Նշված ժամանակահատվածում իրական ՀՆԱ աճը կազմել է 0.5%, այդ թվում՝ ոչ նավթային հատվածում՝ 8.2%[6]: Անվանական ՀՆԱ-ն նախորդ տարվա համեմատ ավելացել է 11.98%-ով, և ՀՆԱ դեֆլյատորը կազմել է 11.4%: ՀՆԱ աճի 52.8%-ը բաժին է ընկել արդյունաբերությանը, 11.0%-ը՝ սոցիալական ծառայությունների ոլորտին, 7.5%-ը՝ շինարարությանը, 7.4%-ը՝ տրանսպորտին և հեռահաղորդակցությանը, 7.2%-ը՝ մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտին, 6.6%-ը՝ գյուղատնտեսությանը, իսկ արտադրանքի և ներմուծման զուտ հարկերը կազմել են ՀՆԱ 7.6%-ը[7]:*

2011 թ. առաջին իլը ամիսներին, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, Ադրբեջանում գնաճը կազմել է 3.4%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ միջին գնաճը կազմել է 8.4%: Ընդ որում՝ միջին գնաճի մակարդակը պայմանավորվել է պարենային ապրանքների՝ 11.4%, ոչ պարենային ապրանքների՝ 2.8% և ծառայությունների գների՝ 4.5% աճով[8]:

2011 թ. առաջին իլը ամիսների ընթացքում Ադրբեջանի առևտրային հաշվեկշիռը եղել է հավելուրդով՝ շուրջ 12.8 մլրդ ԱՄՆ դոլար: Ընդ որում՝ արտահանումը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է 26.0%-ով և կազմել է 19.7 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը աճել է 51.1%-ով և կազմել 6.9 մլրդ ԱՄՆ դոլար[9]: 2011 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների արտահանման արժեքի 86.73%-ը հում նավթի մասնաբաժինն է (2010 թ.՝ 86.53%)[10]:

2011 թ. հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, շուրջ 25.6%-ով աճել է նաև ուղղակի ներդրումների համախառն ներհոսքը: Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը կազմել է շուրջ 2245.4 մլն ԱՄՆ դոլար (1775.4 մլն մանաթ), որում առաջատար են Մեծ Բրիտանիան (51.3%), ԱՄՆ-ն (14.5%), Ճապոնիան (9.0%), Նորվեգիան (5.0%), Թուրքիան (4.2%)[11]:

Ինչպես և նախորդ տարի, 2011 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ևս Ադրբեջանի կենտրոնական բանկը իրականացրել է մանաթի փոխարժեքի կայունության պահպանման քաղաքականություն: Արդյունքում՝ 2011 թ. առաջին իլը ամիսների ընթացքում մանաթի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է ընդամենը 1.4%-ով, իսկ հունվար-սեպտեմբերի միջին փոխարժեքը տ/տ արժևորվել է 1.6%-ով[12]:

Բանկերի կողմից տնտեսությանը տրամադրած վարկերի ծավալները 2011 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ավելացել են 5.5%-ով, ընդ որում՝ ազգային արժույթով վարկերի ծավալներն ավելացել են 2.6%-ով[13]: Ռեզիդենտ տնտեսավարող սուբյեկտների վարկավորման կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն առևտուրը և ծառայությունները (29.8%), շինարարությունը (7.6%), արդյունաբերությունը (5.8%), գյուղատնտեսությունը (4.8%) և տրանսպորտի ու հաղորդակցության ոլորտը (4.0%): Տնտեսության վարկավորման ընդհանուր ծավալների համեստ աճի պայմաններում 2010 թ. վերջի համեմատ շուրջ 25.8%-ով (160 մլն ԱՄՆ դոլարով) ավելացել են անհուսալի վարկերի ծավալները: 2011 թ. սեպտեմբերի վերջի դրությամբ

---

[6] Աղբյուրը՝ Ադրբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2011 թ. հունվար-սեպտեմբեր, աղյուսակ 1.1:
[7] Աղբյուրը՝ http://abc.az/rus/news/58841.html:
[8] Աղբյուրը՝ Ադրբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2011 թ. հունվար-սեպտեմբեր, աղյուսակ 1.2:
[9] Աղբյուրը՝ http://www.azstat.org/sdds/az/F_T/x_tic01.shtml:
[10] Աղբյուրը՝ http://abc.az/rus/news/58822.html:
[11] Աղբյուրը՝ http://abc.az/rus/news/58871.html:
[12] Աղբյուրը՝ http://www.cbar.az/other/azn-rates:
[13] Աղբյուրը՝ Ադրբեջանի կենտրոնական բանկի վիճակագրական բյուլետեն, 2011 թ. հունվար-սեպտեմբեր, աղյուսակ 2.7:

անհուսալի վարկերը կազմել են տնտեսության վարկավորման ծավալների 6.4%-ը՝ 2010 թ. վերջի 5.4%-ի փոխարեն[14]:

Բանկային ավանդների ընդհանուր ծավալներն ավելացել են 22.0%-ով, իսկ ազգային արժույթով ավանդներինը՝ 11.4%-ով: Արտարժութային ավանդների ծավալների 35.5% աճի արդյունքում տնտեսության դոլարայնացման մակարդակը (արտարժույթով ավանդների տեսակարար կշիռը ընդհանուր ավանդներում) հունվար-սեպտեմբերին ավելացել է 4.8%-ով և 2011 թ. սեպտեմբերի վերջի դրությամբ կազմել է 48.8%[15]:

Ադրբեջանի կենտրոնական բանկի արտարժութային պահուստները 2011 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում ավելացել են 535.7 մլն դոլարով (8.4%-ով) և 2011 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել 6.9 մլրդ ԱՄՆ դոլար[16]: Բացի այդ, նշված ժամանակահատվածում շուրջ 9.4 մլրդ դոլարով (41.6%-ով) ավելացել են նաև Ադրբեջանի պետական նավթային հիմնադրամի ակտիվները և 2011 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել 32.2 մլրդ դոլար[17]:

Վրաստանի տնտեսությունում *2011 թ. առաջին կիսամյակում գրանցվել է իրական ՀՆԱ-ի 5.2% աճ[18]: Անվանական ՀՆԱ-ն նախորդ տարվա համեմատ ավելացել է 17.8%-ով և ՀՆԱ-ի դեֆլյատորը կազմել է 11.9%: Նշված ժամանակահատվածում ՀՆԱ ճյուղային կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ են ունեցել արդյունաբերության ոլորտը՝ 17.5%, առևտուրը՝ 16.5%, տրանսպորտի և հեռահաղորդակցության ոլորտը՝ 11.7%, պետական կառավարման ոլորտը՝ 11.4%, գյուղատնտեսությունը՝ 9.6%, իսկ արտադրանքի և ներմուծման զուտ հարկերը կազմել են ՀՆԱ 14.3%-ը[19]:*

2011 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Վրաստանում միջին գնաճը տ/տ կազմել է 10.8%, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ գրանցվել է 0.9% գնաճ: Ընդ որում՝ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ գրանցվել է միայն ծառայությունների գների աճ՝ 5.7%, իսկ կարճաժամկետ, միջինժամկետ և երկարաժամկետ սպառման ապրանքների գները նվազել են համապատասխանաբար 0.2%-ով, 4.1%-ով և 2.3%-ով[20]:

2011 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, արտահանման (ՖՕԲ) ծավալներն ավելացել են 41.7%-ով և կազմել 1,552 մլն դոլար, իսկ ներմուծման (ՍԻՖ) ծավալները՝ 38.4%-ով և կազմել 4,929 մլն դոլար: Ապրանքների արտահանման-ներմուծման գործարքների արդյունքում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ Վրաստանի առևտրային հաշվեկշռի բացասական մնացորդը խորացել է 37.0%-ով՝ կազմելով 3,377 մլն ԱՄՆ դոլար[21] (2011 թ. հունվար-հունիս ամիսներին ապրանքների և ծառայությունների հաշվեկշռի պակասուրդը ՀՆԱ-ում կազմել է 17.4%, իսկ ընթացիկ հաշվի պակասուրդը՝ 12.7%)[22]:

Վրաստանի տնտեսության վերականգնմամբ պայմանավորված՝ սկսել է ավելանալ օտարերկրյա ուղղակի ներդրումների համախառն ներհոսքը: 2011 թ. առաջին կիսամյակի ընթացքում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը կազմել է 387.1 մլն ԱՄՆ դոլար, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 3.3%-ով: Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքում առաջատար են Կիպրոսը (15.2%), Նիդեռլանդները (11.9%), Թուրքիան (9.5%), Մեծ Բրիտանիան (8.7%), Ռուսաստանը (7.9%), Բրիտանական Վիրջինյան կղզիները (7.8%)[23]: Բացի այդ, 2011 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, 21.2%-ով ավելացել է արտերկրից դրամական փոխանցումների ներհոսքը և կազմել 812.7 մլն ԱՄՆ դոլար[24]:

Արտարժութային նման հոսքերի պայմաններում 2011 թ. հունվար-սեպտեմբերի ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ վրացական լարիի միջին փոխարժեքը տ/տ

---

[14] *Աղբյուրը՝ նույն տեղում, աղյուսակ 2.9:*
[15] *Աղբյուրը՝ նույն տեղում, աղյուսակ 2.4:*
[16] *Աղբյուրը՝ http://www.cbar.az/infoblocks/money_reserve_usd:*
[17] *Աղբյուրը՝http://abc.az/rus/news/main/59153.html:*
[18] *2011 թ. երրորդ եռամսյակի տնտեսական աճի պաշտոնական տվյալները բացակայում են:*
[19] *Աղբյուրը՝ http://geostat.ge/cms/site_images/_files/english/nad/GDP_2011Q1(press-release)Eng.pdf:*
[20] *Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի՝ 2011 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, աղյուսակ 1.1:*
[21] *Աղբյուրը՝ http://geostat.ge/cms/site_images/_files/english/bop/External%20Trade%20of%20Georgia%20in%20January-September%202011-Eng.pdf:*
[22] *Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի՝ 2011 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, աղյուսակ 5.3:*
[23] *Աղբյուրը՝ http://geostat.ge/cms/site_images/_files/english/bop/FDI_2011Q2-Eng.pdf:*
[24] *Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի՝ 2011 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, աղյուսակ 5.8:*

արժևորվել է 5.3%-ով, իսկ 2010 թ. դեկտեմբերի վերջի համեմատ լարիի արժևորվել է 6.7%-ով: Հաշվի առնելով լարիի արժևորման միտումները՝ Վրաստանի ազգային բանկը 2011 թ. առաջին հինգ ամիսների ընթացքում ներքին արժութային շուկայում իրականացրել է արտարժույթի զուտ առքի գործարքներ՝ 115.0 մլն ԱՄՆ դոլարի չափով[25]:

Բանկերի կողմից տնտեսության վարկավորման ծավալները 2011 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ավելացել են 18.3%-ով, ընդ որում՝ ազգային արժույթով տրամադրված վարկերի ծավալներն ավելացել են 38.1%-ով, իսկ արտարժութայինը՝ 11.4%-ով[26]: Վարկավորման ընդհանուր ծավալների 55.7%-ը տրամադրվել է ռեզիդենտ տնտեսավարող սուբյեկտներին, այդ թվում՝ ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել առևտրի ոլորտին (49.0%), արդյունաբերությանը (19.8%) և շինարարությանը (11.5%)[27]: 2011 թ. հոկտեմբերի 30-ի դրությամբ անհուսալի վարկերը կազմել են տնտեսության վարկավորման ծավալների 2.34%-ը[28]:

2011 թ. հունվար-սեպտեմբերին բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալն ավելացել է 8.7%-ով, ընդ որում՝ ազգային արժույթով ավանդներն ավելացել են 22.4%-ով, իսկ արտարժույթով ավանդները՝ 3.4%-ով: Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ 1.5%-ով նվազել է տնտեսության դոլարայնացման մակարդակը, և 2011 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ արտարժութային ավանդները կազմել են ընդհանուր ավանդների 68.6%-ը[29]:

Վրաստանի ազգային բանկի արտարժութային պահուստները 2011 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ավելացել են 21.7%-ով և 2011 թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել են 2.75 մլրդ ԱՄՆ դոլար, որը գերազանցել է 2010 թ. վերջի ցուցանիշը 491 մլն ԱՄՆ դոլարով[30]:

3.2. ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ [31]

3.2.1. Ընթացիկ հաշիվ

2011 թ. երրորդ եռամսյակի ընթացքում ընթացիկ հաշիվը ձևավորվել է համաշխարհային տնտեսության տեմպերի դանդաղման և անորոշությունների ավելացման, մասնավորապես՝ Եվրոգոտու պարտքային ճգնաժամի հավանականության ներքո: Համաշխարհային և ներքին տնտեսությունների զարգացումների արդյունքում ընթացիկ հաշվի բարելավման միտումը շարունակվել է: 2011 թ. երրորդ եռամսյակում մետաղների միջազգային գների բարձր մակարդակի պահպանման և արդյունաբերության ճյուղում բարձր աճի պայմաններում ապրանքների արտահանման մեծ աճը շարունակվել է: Ընթացիկ եռամսյակում տնտեսական ակտիվության աճը հանգեցրել է ապրանքների ներմուծման՝ դոլարային արտահայտությամբ և իրական ծավալների աճի, ինչը գերազանցել է սպասումները: Համաշխարհային տնտեսության զարգացումները, հատկապես՝ Ռուսաստանի տնտեսության բանկային համակարգում լարվածությունը, ցայտուն դրսևորվել են սեպտեմբերին, երբ ֆիզիկական անձանց՝ բանկային համակարգով ոչ առևտրային փոխանցումների ներհոսքի աճի տեմպերը դանդաղել են: Այնուամենայնիվ, հուլիս-օգոստոս ամիսների բարձր աճի հաշվին երրորդ եռամսյակում պահպանվել է տրանսֆերտների բարձր աճը: Նշված զարգացումների արդյունքում ընթացիկ հաշվի պակասուրդը 2011 թ. երրորդ եռամսյակում տ/տ նվազել է 65.1 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 204.8 մլն ԱՄՆ դոլար: 2011 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ընթացիկ հաշվի պակասուրդի կշիռը ՀՆԱ-ում բարելավվել է 3.7 տոկոսային կետով:

Ապրանքների արտահանման և ներմուծման դոլարային արժեքները երրորդ եռամսյակում ավելացել են համապատասխանաբար տ/տ 102.9 մլն ԱՄՆ դոլարով (տ/տ 33.9%-ով) և տ/տ 114.7 մլն ԱՄՆ դոլարով (տ/տ 14.1%-ով), որի արդյունքում առևտրային հաշվեկշռի պակասուրդն ավելացել է տ/տ 11.8 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 520.7 մլն ԱՄՆ դոլար:

---

[25] *Աղբյուրը՝ նույն տեղում, աղյուսակ 4.5:*
[26] *Աղբյուրը՝ նույն տեղում, աղյուսակ 3.5:*
[27] *Աղբյուրը՝ նույն տեղում, աղյուսակ 3.10:*
[28] *Աղբյուրը՝ նույն տեղում, աղյուսակ 3.5:*
[29] *Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի՝ 2011 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, աղյուսակ 2.3:*
[30] *Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի՝ 2011 թ. հունվար-սեպտեմբեր ամիսների Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, աղյուսակ 5.1:*
[31] *2011թ. երրորդ եռամսյակի ցուցանիշները ՀՀ ԿԲ կանխատեսումներն են:*

Արտահանման աճը պայմանավորվել է համաշխարհային տնտեսության վերականգնման պայմաններում ՀՀ արդյունաբերության բարձր աճի պահպանմամբ և մետաղների միջազգային գների բարձր մակարդակով: 2011 թ. երրորդ եռամսյակում ապրանքների[32] և ծառայությունների արտահանման դոլարային արժեքի աճը կազմել է տ/տ 23.6%, իսկ իրական ծավալների[33] աճը՝ տ/տ 17.5%: Արտահանման դոլարային արժեքի աճը հիմնականում պայմանավորվել է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» «Հանքահումքային արտադրանք», «Պատրաստի սննդի արտադրանք» և «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի համապատասխանաբար 12.6, 5.7, 2.2 և 1.9 տոկոսային կետ դրական նպաստումներով[34]:

Արտաքին և ներքին տնտեսությունների զարգացումները անդրադարձել են նաև ներմուծման վարքագծի վրա: 2011 թ. երրորդ եռամսյակում տնտեսական ակտիվության աճը հանգեցրել է ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական ծավալների տ/տ 2.4% աճի, ինչը գերազանցել է սպասումները: Ներմուծման գների բարձր մակարդակի պահպանման պարագայում ընթացիկ եռամսյակում ապրանքների[35] և ծառայությունների ներմուծման դոլարային արժեքի աճը կազմել է տ/տ 12.9%:

Ներմուծմանը դրական նպաստում են ունեցել հիմնականում «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «Հանքահումքային արտադրանք», «Մանածագործական իրեր» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերը՝ համապատասխանաբար 4.8, 4.5, 1.4 և 1.1 տոկոսային կետով: Վերջիններս ավելի քան փոխհատուցել են «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի ներմուծման համապատասխանաբար 0.5, 0.4 և 0.2 տոկոսային կետով բացասական նպաստումները:

Արտաքին առևտրի աշխարհագրական բաշխվածության տեսանկյունից՝ առևտրային հաշվեկշռի պակասուրդի աճը 2011 թ. երրորդ եռամսյակում պայմանավորվել է «Այլ երկրներ» խմբի հետ առևտրային հաշվեկշռի պակասուրդի 74.0 մլն ԱՄՆ դոլար աճով: Վերջինս գերազանցել է ԱՊՀ երկրների հետ առևտրային հաշվեկշռի պակասուրդի՝ 41.6 մլն ԱՄՆ դոլարով նվազումը: Եվրոմիության երկրների հետ առևտրային հաշվեկշռի պակասուրդը գրեթե պահպանվել է նախորդ տարվա երրորդ եռամսյակի մակարդակում: «Այլ երկրներ» խմբի մեջ առանձնանում են Իրանը (առևտրային հաշվեկշռի պակասուրդի աճ 19.7 մլն ԱՄՆ դոլարով), Չինաստանի հետ առևտրային հաշվեկշռի պակասուրդն ավելացել է տ/տ 16.7 մլն ԱՄՆ դոլարով: Թուրքիայի, Շվեյցարիայի և Բրազիլիայի հետ առևտրային հաշվեկշռի պակասուրդն ավելացել է համապատասխանաբար 15.1, 14.6 և 14.4 մլն ԱՄՆ դոլարով

Ծառայությունների հաշվեկշռի պակասուրդը երրորդ եռամսյակի ընթացքում տ/տ ավելացել է 4.0 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 70.7 մլն ԱՄՆ դոլար: Պակասուրդի ավելացումը հիմնականում պայմանավորվել է տրանսպորտային ծառայությունների հաշվեկշռի պակասուրդի ավելացմամբ: Իսկ զբոսաշրջության մասով արձանագրվել է հավելուրդ: Նշված զարգացումների արդյունքում ծառայությունների արտահանման և ներմուծման տ/տ աճը երրորդ եռամսյակում կազմել է համապատասխանաբար 11.0% և 9.9%:


Ֆիզիկական անձանց ոչ առևտրային փոխանցումների տ/տ զուտ աճը ընթացիկ եռամսյակում կազմել է 20.1%: Համաշխարհային տնտեսության զարգացումները, հատկապես՝ Ռուսաստանի տնտեսության բանկային համակարգում լարվածությունը, ինչը դրսևորվել է իրացվելիության և բանկային համակարգի նկատմամբ վստահության խնդիրներով, արտահայտվել են սեպտեմբեր ամսին դրամական փոխանցումների ներհոսքի աճի տեմպերի դանդաղմամբ: Վերջինիս

---

[32] Հունվար-սեպտեմբեր ամիսներին արտահանման (ՖՕԲ) աճը կազմել է 33.5%:
[33] Ապրանքների արտահանման և ներմուծման իրական ծավալները ՀՀ ԿԲ գնահատականներն են:
[34] Արտահանման ու ներմուծման ծյուղային և աշխարհագրական բացվածքը ներկայացված է համապատասխանաբար ՖՕԲ և ՍԻՖ գներով:
[35] Հունվար-սեպտեմբեր ամիսներին ներմուծման (ՍԻՖ) աճը կազմել է 12.0%:

դանդաղմանը նպաստել է նաև սեպտեմբեր ամսին ԱՄՆ դոլարի նկատմամբ ռուսական ռուբլու կտրուկ արժեզրկման արդյունքում դոլարային արտահայտությամբ եկամուտների նվազումը: Սեզոնային արտագնա աշխատողների աշխատուժից եկամուտների զուտ ներհոսքը 2011 թ. երրորդ եռամսյակում ավելացել է տ/տ 21.1%-ով և կազմել 305.1 մլն ԱՄՆ դոլար: Վերջինս զգալիորեն գերազանցել է «Եկամուտ ներդրումներից» հոդվածով զուտ արտահոսքը, որի արդյունքում «Եկամուտներ» հոդվածով արձանագրվել է 189.3 մլն ԱՄՆ դոլարի զուտ ներհոսք: Մասնավոր տրանսֆերտների զուտ ներհոսքը ընթացիկ եռամսյակում ավելացել է տ/տ 26.2%-ով և կազմել 161.7 մլն ԱՄՆ դոլար:

2011 թ. 3-րդ եռամսյակում ընթացիկ հաշիվը բարելավվել է



3.2.2. Կապիտալի և ֆինանսական հաշիվ[36]

2011 թ. երրորդ եռամսյակում կապիտալի և ֆինանսական հաշվով արձանագրվել է 385.4 մլն ԱՄՆ դոլարի զուտ ներհոսք, ինչը 132.8 մլն ԱՄՆ դոլարով բարձր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից: Վերջինս զգալիորեն գերազանցել է ընթացիկ հաշվի պակասուրդը: Վճարային հաշվեկշռի հոսքերի արդյունքում ՀՀ կենտրոնական բանկի զուտ արտաքին ակտիվներն ավելացել են 180.5 մլն ԱՄՆ դոլարով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի արտարժութային հաշիվների ավելացմամբ:


Կապիտալ տրանսֆերտների ներհոսքի ծավալները երրորդ եռամսյակում կազմել են 34.7 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարվա նույն եռամսյակում՝ 29.8 մլն ԱՄՆ դոլար):

Օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ ներհոսքը 2011 թ. երրորդ եռամսյակում կազմել է 155.6 մլն ԱՄՆ, իսկ պետական վարկերի զուտ ներհոսքը նույն ժամանակահատվածում ավելացել է 16.4 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 86.1 մլն ԱՄՆ դոլար:

2011 թ. երրորդ եռամսյակում մասնավոր հատվածի զուտ արտաքին ակտիվները նվազել են 109.0 մլն ԱՄՆ դոլարով: Այդ թվում՝ այլ մասնավոր հատվածի (առանց բանկերի) զուտ արտաքին ակտիվներն ավելացել են 50.0 մլն ԱՄՆ դոլարով, իսկ՝ բանկային հատվածի զուտ արտաքին ակտիվները նվազել են 159.0 մլն ԱՄՆ դոլարով:

[36] *2011 թ. երրորդ եռամսյակի կապիտալի և ֆինանսական հաշվի բոլոր ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատականներն են:*

2011 թ. 3-րդ եռամսյակում կապիտալի և ֆինանսական հաշվով միջոցների զուտ ներհոսքը գերազանցել է ընթացիկ հաշվի պակասուրդը




3.3. ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ, ՓՈԽԱՐԺԵՔ ԵՎ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

3.3.1. Տոկոսադրույքներ

2011 թ. երրորդ եռամսյակում ԿԲ խորհուրդը վերաֆինանսավորման տոկոսադրույքը իջեցրել է 0.5 տոկոսային կետով՝ 8.5%-ից՝ 8.0%: Բանկերի կողմից ԿԲ-ում ներդրված միջոցների և ԿԲ-ից ներգրավվող լոմբարդային ռեպո տոկոսադրույքները ևս իջեցվել են 0.5 տոկոսային կետով և կազմել են համապատասխանաբար 5.0% և 11.0%:


Վերոնշյալ գործոնները իրենց ազդեցությունն են ունեցել ԿԲ կողմից իրականացված գործառնությունների և բանկերի կողմից ներգրավված ու տեղաբաշխված միջոցների տոկոսադրույքների վրա:

ԿԲ վերաֆինանսավորման, մշտական հնարավորությունների գործիքների և միջբանկային ռեպո տոկոսադրույքներ



Երրորդ եռամսյակում ԿԲ-ն շարունակել է յուրաքանչյուր չորեքշաբթի առաջարկել ռեպո համաձայնագրերի կնքում: Արդյունքում՝ իրականացված ռեպո գործառնությունների միջին շաբաթական ծավալը կազմել է մոտ 8.0 մլրդ դրամ՝ 9.8 միջին տոկոսով (նախորդ եռամսյակում՝ 4.5 մլրդ դրամ՝ 10.63 միջին տոկոսով): Միաժամանակ, ԿԲ-ն շարունակել է կառուցվածքային գործիքի՝ երկարաժամկետ ռեպոյի կիրառումը, որը եռամսյակի ընթացքում կազմել է մոտ 1.5 մլրդ դրամ՝ 10.93 միջին տոկոսով (նախորդ եռամսյակում՝ 1.5 մլրդ դրամ՝ 10.11 միջին տոկոսով): Երրորդ եռամսյակի ընթացքում ԿԲ-ն կնքել է նաև հակադարձ ռեպո գործառնություններ, որոնց համախառն ծավալը կազմել է մոտ 60.0 մլրդ դրամ՝ 8.10 միջին կշռված տոկոսով (նախորդ եռամսյակում՝ 31.3 մլրդ դրամ՝ 8.46 միջին տոկոսով):

ԿԲ կողմից իրականացված ռեպո գործառնությունների ծավալը (մլրդ ՀՀ դրամ)



Միևնույն ժամանակ, առևտրային բանկերը կիրառել են նաև մշտական հնարավորությունների գործիքներ: Կենտրոնական բանկի հետ կնքվել են 27.2 մլրդ դրամ ծավալի լոմբարդային ռեպո գործառնություններ, իսկ Կենտրոնական բանկում ներդրված դրամական միջոցների համախառն ծավալը կազմել է 243.9 մլրդ դրամ (նախորդ եռամսյակում՝ համապատասխանաբար 122.9 մլրդ դրամ և 253.5 մլրդ դրամ):


Եռամսյակի ընթացքում ակտիվացել է բորսայական միջբանկային վարկերի շուկան (overnight borsa): Արդյունքում՝ միջբանկային վարկերի ծավալը կազմել է մոտ 740.3 մլրդ դրամ (նախորդ եռամսյակում՝ 688.4 մլրդ դրամ), իսկ միջին տոկոսադրույքը նվազել է 0.38 տոկոսային կետով՝ կազմելով 7.83 %:

2011 թ. երրորդ եռամսյակի ընթացքում միջբանկային և ներբանկային ռեպո շուկաներում իրականացված գործառնությունների համախառն ծավալը կազմել է 276.4 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի համեմատ նվազելով 25.7 մլրդ դրամով: Շուկայական ռեպո միջին տոկոսադրույքը գրեթե չի փոխվել՝ կազմել է 9.96%:

Առևտրային բանկերի միջև իրականացված գործառնությունների տեսակարար կշիռը ռեպո շուկայի ընդհանուր ծավալում կազմել է մոտ 30%՝ նախորդ եռամսյակի 38%-ի փոխարեն: Միջբանկային ռեպո շուկայում միջին տոկոսադրույքը նախորդ եռամսյակի համեմատ աճել է 0.3 տոկոսային կետով և կազմել 9.48%:


2011 թ. երրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ պետական (գանձապետական) կարճաժամկետ պարտատոմսերի թողարկման ընդհանուր ծավալը կազմել է 12.5 մլրդ դրամ (նախորդ եռամսյակում՝ 14.0 մլրդ դրամ), իսկ տեղաբաշխված ՊԿՊ ընդհանուր ծավալը՝ 12.5 մլրդ դրամ (նախորդ եռամսյակում՝ 11.7 մլրդ դրամ): Պետական (գանձապետական) պարտատոմսերի առաջնային շուկայում դրսևորվել է տոկոսադրույքների նվազման միտում, որն առավել արտահայտված էր կարճաժամկետ հատվածում: Կարճաժամկետ հատվածում նախորդ եռամսյակի համեմատ միջին տոկոսադրույքը նվազել է 1.19 տոկոսային կետով՝ կազմելով 8.18%:

ՊԿՊ և միջբանկային ռեպո տոկոսադրույքներ




Ինչպես ցույց է տալիս եկամտաբերության կորերի ուսումնասիրությունը, ՊՊ երկրորդային շուկայում եկամտաբերությունները միջին հաշվով նվազել են մոտ 1.62 տոկոսային կետով, իսկ միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում՝ հակառակը՝ տոկոսադրույքներն աճել են 0.92 տոկոսային կետով: Արդյունքում՝ փոխվել է կորի թեքությունը՝ 0.31-ից մինչև 0.4, ինչը վկայում է երկարաժամկետ ու կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքների միջև տարբերության աճի մասին:

Երկրորդային շուկայում տոկոսադրույքները նվազել են կարճաժամկետ հատվածում



Բանկային համակարգում ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով վարկերի և ավանդների տոկոսադրույքները դրսևորել են հետևյալ միտումները. երրորդ եռամսյակում ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ներգրավված ավանդների միջին տոկոսադրույքները կազմել են համապատասխանաբար 10.29 % և 7.18 %: Նախորդ եռամսյակի համեմատ՝ ՀՀ դրամով ներգրավված ավանդների միջին տոկոսադրույքն աճել է 0.12 տոկոսային կետով, իսկ ԱՄՆ դոլարով ներգրավված ավանդների միջին տոկոսադրույքը նվազել է 0.11 տոկոսային կետով: Եռամսյակի ընթացքում ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ավանդների միջին տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 3.11 տոկոսային կետ (նախորդ եռամսյակում՝ 2.88):


Բանկային համակարգի կողմից ներգրավված ավանդների տոկոսադրույքները



ՀՀ դրամով տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքը երրորդ եռամսյակում կազմել է 18.61 %, իսկ ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերինը՝ 11.40 %: Նախորդ եռամսյակի համեմատ դրամով վարկերի միջին տոկոսադրույքը աճել է 0.42 տոկոսային կետով, իսկ ԱՄՆ դոլարով վարկերինը նվազել է 0.37 տոկոսային կետով: Արդյունքում՝ ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով վարկերի միջին տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 7.21 տոկոսային կետ (նախորդ եռամսյակում 6.42):

ՀՀ դրամով վարկերի ու ավանդների միջին տոկոսադրույքների տարբերությունը, պայմանավորված սպառողական վարկերի բարձր տեսակարար կշռով, պահպանել է նախորդ եռամսյակի բարձր մակարդակը՝ 8.32 տոկոսային կետ, իսկ ԱՄՆ դոլարով վարկերի ու ավանդների միջին տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 4.22 տոկոսային կետ (նախորդ եռամսյակում՝ 4.47):


Բանկային համակարգի կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքները



3.3.2. Փոխարժեք

ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին շուկայական փոխարժեքը 2011 թ. երրորդ եռամսյակի վերջին, նախորդ եռամսյակի վերջի համեմատ, արժեզրկվել է 0.86%-ով՝ 368.86 դրամից հասնելով 372.05 դրամի, իսկ միջին եռամսյակային փոխարժեքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արժեզրկվել է 0.80 %-ով՝ 365.51 դրամից հասնելով 368.45 դրամի:

ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը 2011 թ. երրորդ եռամսյակում




Եռամսյակի ընթացքում միջբանկային շուկայում իրականացված գործառնությունների համախառն ծավալը կազմել է 2508.10 մլն ԱՄՆ դոլար, որը 16.35 %-ով ավելի է նախորդ տարվա երրորդ եռամսյակի գործառնությունների ծավալից (2,156 մլն ԱՄՆ դոլար):

Եվրո/դրամ գործառնությունների շուկայում նույնպես տեղի է ունեցել ծավալների աճ: Համախառն ծավալը կազմել է 219.5 մլն եվրո (նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 4.3 %-ով):

Դրամի առաջարկը կարգավորելու և դրամի փոխարժեքի կտրուկ տատանումները մեղմելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը երրորդ եռամսյակում ՀՀ բանկերից գնել է 29.43 մլն, վաճառել՝ 9.54 մլն ԱՄՆ դոլար:

ՀՀ արժութային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները
(մլն ԱՄՆ դոլար)



2011 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ դրամի անվանական արդյունավետ փոխարժեքը եռ/եռ արժևորվել է 3.2%-ով: Վերջինս պայմանավորվել է ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին եռամսյակային փոխարժեքի եռ/եռ շուրջ 1.4% արժևորմամբ և գործընկեր երկրների արժույթների՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ միջինը շուրջ 1.8% արժեզրկմամբ:


Նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ ՀՀ անվանական արդյունավետ փոխարժեքի շուրջ 5.9% արժեզրկումը առավելապես պայմանավորվել է գործընկեր երկրների արժույթների՝ միջին կշռված արտահայտությամբ տ/տ 5.1% արժևորմամբ՝ հիմնականում ԱՄՆ դոլարի նկատմամբ եվրոյի և ռուսական ռուբլու արժևորման հետևանքով: Նույն ժամանակահատվածում ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկումը կազմել է տ/տ 0.9%:

ՀՀ դրամի անվանական արդյունավետ փոխարժեքի եռ/եռ 3.2% արժևորման պարագայում ՍԳԻ-ով հաշվարկված իրական արդյունավետ փոխարժեքը արժեզրկվել է եռ/եռ 0.8%-ով, ընդ որում՝ Հայաստանում արձանագրել է եռ/եռ 4% գնանկում, իսկ գործընկեր երկրների միջին կշռված գնաճը կազմել է եռ/եռ 0.1%:

Ինչ վերաբերում է իրական արդյունավետ փոխարժեքի տ/տ փոփոխությանը, ապա երրորդ եռամսյակում արժեզրկման տեմպերն արագացել են և կազմել տ/տ 6.6 տոկոս (նախորդ եռամսյակում՝ տ/տ 2.6% արժեզրկում): Վերջինիս նպաստել է անվանական արդյունավետ փոխարժեքի տ/տ 5.9% արժեզրկումը, ընդ որում՝ գործընկեր երկրների միջին կշռված տ/տ 5.5% գնաճի և Հայաստանում միջին եռամսյակային տ/տ 5.1% գնաճի պարագայում[37]: Գործընկեր երկրների միջին կշռված գնաճի վրա զգալի ազդեցություն է ունեցել հատկապես Ռուսաստանի և Իրանի միջին եռամսյակային բարձր գնաճը (համապատասխանաբար՝ տ/տ 8.1% և 19.8%). նպաստումները՝ համապատասխանաբար 1.7, 1.1 տոկոսային կետ, ինչպես նաև Եվրոգոտու 1.0 տոկոսային կետ նպաստումը՝ պայմանավորված վերջինիս բարձր կշռով:

Նշենք նաև, որ արտադրողների գներով հաշվարկված իրական փոխարժեքը նույն ժամանակահատվածում եռ/եռ արժևորվել է մոտ 0.1%-ով: Նման պայմաններում տ/տ արժեզրկումը կազմել է 10.4% (նախորդ եռամսյակում՝ շուրջ 8% արժեզրկում): Վերջինիս վրա մեծ ազդեցություն է ունեցել գործընկեր երկրներում արտադրողների գների բարձր տ/տ աճը:

2011 թ. երրորդ եռամսյակում իրական փոխարժեքը արժեզրկվել է



2011 թվականի երրորդ եռամսյակում ներքին իրական փոխարժեքն[38] արժեզրկվել է տ/տ 3.3 %-ով՝ նախորդ եռամսյակի 4.8% արժևորման փոխարեն, որը հետևանք է արտահանելի հատվածի գների՝ ոչ արտահանելի հատվածի

[37] *Համաձայն ԱՎԾ պաշտոնական հրապարակումների՝ տվյալ ցուցանիշը կազմում է 5.8%. տարբերությունը պայմանավորված է հաշվարկված ինդեքսների տարբեր բազաներով:*

[38] *Ներքին իրական փոխարժեքը հաշվարկվում է ոչ արտահանելի ապրանքների գների և արտահանելի ապրանքների գների հարաբերությամբ:*

գների նկատմամբ գերազանցող աճի[39]: Հարկ է նշել, որ եռ/եռ ներքին իրական փոխարժեքն արժեզրկվել է 9.6%-ով:

Արտահանելի ապրանքների գները նախորդ տարվա համեմատությամբ բարձրացել են տ/տ 9.9%-ով, իսկ ոչ արտահանելի ապրանքների և ծառայությունների գները՝ տ/տ 6.3%-ով (նախորդ եռամսյակում՝ համապատասխանաբար 10.3% և 15.5%):

3.3.3. Դրամավարկային զարգացումներ


Հաշվի առնելով երկրորդ եռամսյակի արդյունքում արտաքին և ներքին գնաճային միջավայրերի որոշակի կայունացման միտումները և հետագա մեկ տարվա ժամանակահատվածում գնաճային ճնշումների զգալի մեղմման ակնկալիքները՝ դրամավարկային քաղաքականության ծրագրով 2011 թվականի երրորդ եռամսյակի համար նախանշված կանխատեսումները ճշգրտվել են աճի տեմպերի բարձրացման ուղղությամբ:

Իրականում, երրորդ եռամսյակի ընթացքում 12-ամսյա գնաճի նվազողական վարքագծի և հետագա 12-ամսյա ժամանակահատվածում ևս կանխատեսվող նվազող հետագծի պայմաններում, ՀՀ ԿԲ-ն հուլիս-օգոստոս ամիսներին անփոփոխ է թողել (8.5%), իսկ սեպտեմբերին իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով:

Ինչպես և նախորդ եռամսյակում, երրորդ եռամսյակում ևս դրամավարկային քաղաքականության զարգացումները հիմնականում համահունչ են եղել ակնկալվող սցենարին: Այսպես, արտարժութային ավանդները եռամսյակի ընթացքում ավելացել են 0.6%-ով կամ 2.6 մլրդ դրամով, որն ամբողջությամբ բաժին է ընկել ժամկետային արտարժութային ավանդներին՝ 6.3 մլրդ դրամ կամ 2.0%, այն դեպքում, երբ ցպահանջ արտարժութային ավանդները եռամսյակի ընթացքում նվազել են շուրջ 3.7 մլրդ դրամով կամ 3.2%-ով: Այդուհանդերձ, ինչպես ժամկետային, այնպես էլ ցպահանջ արտարժութային ավանդների կառուցվածքում ավելացել են տնային տնտեսություններից ներգրավված միջոցները:

Երրորդ եռամսյակի ընթացքում դրամային ավանդների աճը գերազանցել է ակնկալիքները՝ կազմելով 10.3% կամ 25.3 մլրդ դրամ, որն այս անգամ հավասարաչափ է բաշխվել դրամով ժամկետային և ցպահանջ միջոցների փոփոխությունների միջև՝ համապատասխանաբար 11.9% կամ 13.2 մլրդ դրամ և 8.9% կամ 12.1 մլրդ դրամ: Ընդ որում՝ երկու դեպքում էլ գերակշռել են մասնավոր ձեռնարկություններից ու տնային տնտեսություններից ներգրավված դրամային ավանդները:

2011 թվականի երրորդ եռամսյակում դրամով ավանդների աճի տեմպերը գերազանցել են ակնկալիքները




Ֆինանսական համակարգից դուրս գտնվող կանխիկը եռամսյակի ընթացքում ավելացել է 6.1%-ով կամ 18.3 մլրդ դրամով:

[39] *Ոչ արտահանելի և արտահանելի ապրանքների գները հաշվարկվել են փորձագիտական դատողությունների միջոցով սպառողական գների զամբյուղից համապատասխան հատվածների ապրանքների ու ծառայությունների տարանջատմամբ:*

Վերոնշյալ շարժերի արդյունքում փողի զանգվածը երրորդ եռամսյակում ավելացել է 4.7%-ով, իսկ դրամային զանգվածը՝ 8.0%-ով:


Չնայած տարվա նախորդ երկու եռամսյակների համեմատ աճի տեմպերի որոշ չափով դանդաղմանը, այնուամենայնիվ, երրորդ եռամսյակում ևս պահպանվել է տնտեսության վարկավորման բարձր աճը՝ 6.2% կամ 65.7 մլրդ դրամ: Վերջինիս կառուցվածքում կրկին գերակշռել են արտարժույթով վարկերը՝ կազմելով 47.2 մլրդ դրամ կամ 7.3%: Երրորդ եռամսյակում արտարժութային վարկերի հիմնական աղբյուր են մնացել արտասահմանից ներգրավված վարկային ռեսուրսները և ԿԲ-ում արտարժութային թղթակցային հաշիվների ավելցուկային միջոցները, որոնք գերազանցապես ուղղվել են փոքր և միջին բիզնես ծրագրերի ֆինանսավորմանը: Դրամով վարկերը եռամսյակի ընթացքում ավելացել են 18.5 մլրդ դրամով կամ 3.8%-ով, որում գերակշռել են տնային տնտեսություններին տրամադրված սպառողական վարկերը:

2011 թվականի երրորդ եռամսյակում արտարժութային վարկավորման աճի բարձր տեմպերը պահպանվել են



Երրորդ եռամսյակում փողի բազայի աճը կազմել է 9.7%, ինչը տեղի է ունեցել բոլոր բաղադրատարրերի հաշվին. ԿԲ-ից դուրս կանխիկն աճել է 6.1%-ով, իսկ ԿԲ-ում բանկերի թղթակցային հաշիվների միջոցները՝ 16.4%-ով: Ընդ որում՝ վերջինս մեծապես պայմանավորվել է արտարժութային թղթակցային հաշիվների խոշորածավալ ավելացմամբ, որը մեկ բանկի միանգամյա ժամանակավոր գործարքի հետևանք է: Արդյունքում, ի տարբերություն փողի բազայի, դրա դրամային հատվածն աճել է ավելի դանդաղ տեմպերով՝ կազմելով 5.9%:

Երրորդ եռամսյակում փողի բազայի աճին մեծապես նպաստել է ԿԲ-ում արտարժութային թղթակցային հաշիվների միջոցների մեծածավալ աճը




Դրամավարկային պայմանների որոշակի թուլացման ազդեցությամբ սեպտեմբերի վերջին 12-ամսյա կտրվածքով ձևավորվել են դրամավարկային ցուցանիշների հետևյալ վարքագծերը. փողի և դրամային զանգվածներն աճել են համապատասխանաբար 26.0% և 29.3%-ով, շրջանառությունում եղած կանխիկը՝ 17.7%-ով, դրամային ավանդները՝ 46.3%-ով, արտարժութային ավանդները՝ 21.6%-ով, փողի բազան՝ 30.2%-ով և տնտեսության վարկավորումը՝ 36.7%-ով:

Երրորդ եռամսյակի վերջին տնտեսության դոլարայնացման մակարդակը (արտարժութային ավանդներ/փողի զանգված) կազմել է 42.0%, որը նվազել է նախորդ եռամսյակի նույն ցուցանիշի նկատմամբ 1.7 տոկոսային կետով՝ պայմանավորված տարեսկզբից արտարժութային ավանդների աճի տեմպերի շարունակական նվազմամբ: Նույն գործոնով պայմանավորված՝ 1.5 տոկոսային կետով նվազում է արձանագրվել նաև նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի նկատմամբ:


Ֆինանսական միջնորդությունը բնութագրող՝ տնտեսության փողայնացման և դրամայնացման գործակիցները եռամսյակի արդյունքներով կազմել են համապատասխանաբար 27.3% և 15.8%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի նկատմամբ աճելով համապատասխանաբար 13.7%-ով և 17.8%-ով:

Տնտեսության փողայնացման և դրամայնացման գործակիցները



Ֆինանսական միջնորդությունը բնութագրող մյուս ցուցանիշները՝ փողի և դրամային բազմարկիչները երրորդ եռամսյակում դրսևորել են հետևյալ միտումները. փողի բազմարկիչը նվազել է 5.0%-ով՝ սեպտեմբերի վերջին կազմելով 1.8, որի պարագայում տ/տ աճը կազմել է ընդամենը 0.2%, իսկ դրամային բազմարկիչը եռ/եռ աճել է 1.8%-ով և տ/տ 4.9%-ով՝ սեպտեմբերի վերջին կազմելով շուրջ 1.3: Փողի բազմարկչի նվազումը եռամսյակի ընթացքում պայմանավորվել է ԿԲ-ում բանկերի արտարժութային թղթակցային հաշիվների միջոցների մեծածավալ համալրման հաշվին փողի բազայի, փողի զանգվածի համեմատ, աճի ավելի արագ տեմպերով, ինչը հակառակ պատկերն է ունեցել դրամային բազմարկչի մասով:

Փողի և դրամային բազմարկիչներ



3.4. ՀԱՄԱԽՄԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ ԵՎ ԱՌԱՋԱՐԿ

3.4.1. Համախառն պահանջարկ

Ներքին պահանջարկ

Մասնավոր սպառում և ներդրումներ[40]**.** Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների, 2011 թվականի երրորդ եռամսյակում մասնավոր ծախսումներն իրական արտահայտությամբ ավելացել են շուրջ 6%-ով՝ պայմանավորված ինչպես մասնավոր ներդրումների, այնպես էլ սպառման ոլորտի ծախսերի իրական աճով, պետական ծախսումները ավելացել են մոտ 1%-ով, և այդ միջավայրում ներքին պահանջարկն ավելացել է 5%-ով:

Մասնավոր ծախսումների կառուցվածքում մասնավոր ներդրումներն ավելացել են շուրջ 4%-ով՝ պայմանավորված ներքին և հատկապես արտաքին պահանջարկի դանդաղ, բայց շարունակական աճի արդյունքում տնտեսության մի շարք հատվածներում արտադրողականության մակարդակի բարձրացմամբ: Աճող մասնավոր ներդրումները հիմնականում ֆինանսավորվել են մասնավոր հատվածին տրամադրվող վարկային միջոցներով, մասամբ էլ՝ ներքին տնտեսության աճի հետևանքով ավելացած սեփական միջոցներով: Չնայած մասնավոր ներդրումներն ավելացել են, սակայն աճի տեմպերը, նախաճգնաժամային մակարդակի համեմատ, շարունակում են մնալ ցածր, ինչը պայմանավորված է շինարարության ճյուղում առկա իրավիճակով[41]:

Մասնավոր սպառումն իրական արտահայտությամբ ավելացել է մոտ 6%-ով՝ հիմնականում պայմանավորված մասնավոր հատվածի տնօրինվող եկամուտների աճով՝ ի հաշիվ արտասահմանից փոխանցվող դրամական միջոցների ավելացման և ներքին տնտեսությունում արձանագրվող տնտեսական աճի: Մասնավոր հատվածի սպառման աճին որոշակի նպաստում է ունեցել նաև վարկավորման ծավալների աճը: Մասնավոր սպառման աճն արտացոլում է երրորդ եռամսյակում արձանագրված առևտրի շրջանառության ծավալների տ/տ 4.8% աճը:

Մասնավոր սպառման և ներդրումների վերը նշված զարգացումների մասին վկայում են նաև ՀՀ ԿԲ կողմից հաշվարկվող և հրապարակվող բաղադրյալ տնտեսական ինդեքսները[42]: Այսպես. 2011 թվականի երրորդ եռամսյակում սպառողների վստահության ինդեքսն աճել է 6.3%-ով, ընդ որում՝ ընթացիկ պայմանների ինդեքսն աճել է 11.8%-ով, գործարար միջավայրի ինդեքսը նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ աճել է 4.7%-ով, իսկ տնտեսական ակտիվությունը տնտեսության բոլոր հատվածներում բարձր մակարդակ ունի:

Մասնավոր ծախսումների աճի արդյունքում, 2011 թվականի երրորդ եռամսյակում մասնավոր ծախսումների ճեղքվածքը, չնայած շարունակական փոքրացմանը, դեռևս բացասական է: Վերոնշյալ զարգացումների պարագայում 2011 թվականի երրորդ եռամսյակում մասնավոր հատվածի կողմից իրականացվող ծախսումները գնաճի վրա էական ազդեցություն չեն ունեցել:

Պետական սպառում և ներդրումներ [43]**.** 2011 թվականի երրորդ եռամսյակում շարունակվել է մակրոտնտեսական կայունության ապահովմանն ուղղված հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը, որը դրսևորվել է ծրագրվածին համապատասխան եկամուտների հավաքագրմամբ և պետական ծախսերի տնտեսումներով[44]: Արդյունքում՝ համախառն պահանջարկի և, հետևաբար, գների վրա հարկաբյուջետային քաղաքականությունը ունեցել է զսպող ազդեցու-

---

[40] Մասնավոր սպառման և ներդրումների իրական աճի երրորդ եռամսյակի ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են: Նշված ցուցանիշների փաստացի թվերը 2011 թվականի երկրորդ եռամսյակի դրությամբ են: Ենթաբաժնում ներկայացված իրական աճի գնահատված ցուցանիշները նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:

[41] Տե՛ս սույն հաշվետվության «Ամբողջական առաջարկ» բաժինը:


[42] Տե՛ս http://www.cba.am/am/SitePages/statsscci.aspx

[43] Հարկաբյուջետային հատվածի վերլուծությունը կատարվել է երրորդ եռամսյակի նախնական փաստացի ցուցանիշների հիման վրա (ներառյալ ՕԻԳ-երի միջոցները) կազմված համախմբված բյուջեի ցուցանիշներով: 2011 թվականին հարկաբյուջետային ազդակի ցուցանիշները գնահատվել են 2010 թվականի երրորդ եռամսյակի համախմբված բյուջեի ցուցանիշների նկատմամբ: Ընդ որում, եկամուտների ազդակը հաշվարկվել է անվանական ՀՆԱ գնահատված ցուցանիշի, իսկ ծախսերի ազդակը՝ պոտենցիալ ՀՆԱ գնահատված ցուցանիշի նկատմամբ:

[44] Բյուջեի եկամուտների, ծախսերի և պակասուրդի ցուցանիշների ծրագրված մակարդակների նախնական փաստացի ցուցանիշները համեմատվել են ՀՀ կառավարության կողմից սահմանված եռամսյակային համամասնությունների (ՕԻԳ-երը ներառյալ) հետ:

թյուն, որը, ըստ հարկաբյուջետային ազդակի գնահատված ցուցանիշի, կազմել է 0.5 տոկոսային կետ զսպող՝ կանխատեսված 0.8 ընդլայնողի փոխարեն: Ընդ որում, եռամսյակի ընթացքում զսպողական ազդակի ձևավորումը ամբողջությամբ պայմանավորվել է ծախսերի տնտեսումների հետևանքով դրսևորված զսպող ազդեցությամբ:

2011 թվականի երրորդ եռամսյակում հարկաբյուջետային ազդակն ունեցել է փոքր զսպող ազդեցություն



Հատկանշական է, որ 2011 թվականի երրորդ եռամսյակում ևս տնտեսության վերականգնման միտումները դրական ազդեցություն են ունեցել ծրագրված համամասնություններին համապատասխան պետական բյուջեի եկամուտների հավաքագրումների ապահովման համար:


Նախորդ տարվա երրորդ եռամսյակի համեմատ, համախմբված բյուջեի հարկային եկամուտների և պարտադիր սոցիալական ապահովության վճարների աճը կազմել է 9.6%: Ընդ որում, հարկային եկամուտների կառուցվածքում տ/տ նվազել են անուղղակի հարկերի (1.2 տոկոսային կետ) և աճել են ուղղակի հարկերի (2.1 տոկոսային կետ) տեսակարար կշիռները՝ համապատասխանաբար կազմելով հարկերի 62.6%-ը և 26.7%-ը: Ընդ որում 0.9 տոկոսային կետով նվազել է նաև այլ հարկերի տեսակարար կշիռը՝ կազմելով հարկերի 10.7%-ը: Անուղղակի հարկերի նվազումը հիմնականում պայմանավորվել է ակցիզային հարկի նվազմամբ, որը տ/տ կազմել է 20.5%: Դա հիմնականում պայմանավորվել է ներմուծվող ենթաակցիզային ապրանքներից ստացվող մուտքերի կրճատմամբ: Ավելացված արժեքի հարկի և մաքսատուրքի ցուցանիշները համապատասխանաբար ավելացել են 10.7%-ով և 26.6%-ով: Անուղղակի հարկերի տ/տ աճը կազմել է 7.9%, իսկ ուղղակի հարկերինը՝ 19.6%: Ուղղակի հարկերի կառուցվածքում աճ է արձանագրվել բոլոր հարկատեսակների մասով. մասնավորապես՝ շահութահարկի աճը կազմել է 33.8%, իսկ եկամտահարկի աճը՝ 7.5%: Բյուջեի այլ եկամուտները նվազել են՝ կազմելով 33.6%:

ՀՀ բյուջեի ծախսերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 4.7%-ով, սակայն զգալիորեն թերակատարվել են ՀՀ պետական բյուջեի՝ երրորդ եռամսյակի համար նախատեսված համամասնությունների համեմատությամբ: Ընդ որում, ընթացիկ ծախսերն ավելացել են տ/տ 5.6%-ով, որտեղ պետական սպառման տ/տ աճը կազմել է 5.1%: «Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ» հոդվածով գրանցվող ծախսերը աճել են ընդամենը 1.1%-ով, զգալի ավելացել է ներքին ֆինանսավորման աղբյուրների կշիռը և նվազել արտաքին ֆինանսավորման աղբյուրներինը՝ համապատասխանաբար կազմելով 72.3% և 27.7%, նախորդ տարվա համապատասխանաբար 63.3% և 36.7%-ի փոխարեն:


Եկամուտների և ծախսերի վերը նշված դրսևորումների արդյունքում, երրորդ եռամսյակում բյուջեի պակասուրդը կազմել է 22.7 մլրդ դրամ կամ եռամսյակի համար նախատեսվածի 71.7%-ը: Վերջինս առավելապես (110.9%-ով) ֆինանսավորվել է արտաքին աղբյուրների հաշվին, իսկ ներքին աղբյուրների հաշ-

վին ֆինանսավորումը ՀՀ կենտրոնական բանկում գտնվող գանձապետական միասնական հաշվի՝ արտաքին վարկերի որոշ մասը չծախսելու պատճառով կազմել է -10.9%: Արտաքին վարկերի 12.9 մլրդ դրամը կազմել է ԱՄՀ վարկի հերթական մասնաբաժինը, իսկ 10.6 մլրդ դրամը՝ Եվրոմիության կողմից տրամադրվող «Մակրոֆինանսական աջակցության» վարկի մասնաբաժինը:

ՀՀ բյուջեի ծախսերի կառուցվածքում 2011 թ. երրորդ եռամսյակում հիմնականում տ/տ նվազել են տրանսֆերտները



2011 թ. երրորդ եռամսյակում պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում գերակշռել է արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը



Ամփոփելով ինը ամիսների արդյունքները՝ նշենք, որ տնտեսական աճի ապահովումն ուղեկցվել է պետական բյուջեի եկամուտների ծրագրված համամասնությունների կատարմամբ, միևնույն ժամանակ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ապահովելով եկամուտների 10% աճ (52.3 մլրդ դրամ), պետական ծախսերի (ՕԻԳ -երի միջոցները ներառյալ) տ/տ մոտ 2.2% աճ: Արդյունքում, ինն ամիսների բյուջեի պակասուրդը կազմել է 41.8 մլրդ դրամ կամ տարեկան ծրագրվածի մոտ 28.2%-ը, իսկ համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունն ունեցել է զսպողական ազդեցություն, որը գնահատվում է 1.7 տոկոսային կետ:

Մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների տ/տ աճը 2011 թ. 3-րդ եռամսյակում՝ իրական արտահայտությամբ

Ցուցանիշներ	2011 III / 2010 III
Իրական ՀՆԱ	5.4
Ներքին պահանջարկ	5.0
Սպառում	5.5
Պետական	-0.3
Մասնավոր	6.2
Կապիտալ ներդրումներ	-4.0
Պետական	2.7
Մասնավոր	4.1
Արտահանում [45]	17.5
Ներմուծում	2.4

[45] *Արտահանման ու ներմուծման ցուցանիշները ներառում են ծառայությունների ցուցանիշները:*

3.4.2. Համախառն առաջարկ[46]

2011 թվականի երրորդ եռամսյակի համար հրապարակված տնտեսական աճի ցուցանիշը, հաշվարկված նոր՝ փոփոխված մեթոդաբանությամբ, կազմել է տ/տ 3.9%:

2011 թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի տնտեսական աճի տ/տ ցուցանիշի վրա հիմնված ՀՀ ԿԲ գնահատականները համահունչ են նախկին կանխատեսումներին: Ընդ որում, նախորդ կանխատեսումներում նախանշված արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերում՝ աճի ուղղությամբ, իսկ շինարարության ճյուղում՝ նվազման ուղղությամբ ռիսկերի դրսևորման արդյունքում, շինարարության ճյուղի անկումը ամբողջությամբ փոխհատուցվում է արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերում ակնկալվածից բարձր աճով:

Այսպես, ***արդյունաբերության*** ճյուղում ավելացված արժեքի աճը գնահատվում է տ/տ 14.8%-ի շրջակայքում: Արդյունաբերությունում արձանագրված աճին համեմատաբար մեծ նպաստում ունեցող ենթաճյուղերն են. *մետաղե հանքաքարերի արդյունահանումը* (14.7% աճ), *սննդամթերքի*[47] (15.9% աճ), *խմիչքների*[48] (11.6% աճ), *պատրաստի մետաղե արտադրատեսակների* (96.3% աճ), *շինանյութերի* (6.2% աճ) և *հիմնային մետաղների* (10.3% աճ) *արտադրությունը,* ինչը ինչպես ներքին, այնպես էլ համաշխարհային տնտեսության վերականգնման շարունակական դրսևորման պայմաններում արտաքին պահանջարկի աճի արդյունք է: Ճյուղում ավելացված արժեքի աճին մեծ նպաստում է ունեցել նաև էլեկտրաէներգիայի և գազի արտադրության ծավալների բարձր աճը (17.5%)՝ պայմանավորված ինչպես տնտեսական ակտիվության աճով, այնպես էլ Իրան արտահանվող էլեկտրաէներգիայի ծավալների աճով:

Շինարարության ճյուղի ավելացված արժեքի նվազումը գնահատվում է տ/տ շուրջ 11%: Ընդ որում, միջազգային վարկերի (49% նվազում), կազմակերպությունների (23.1% նվազում) և բնակչության (37.1% նվազում) միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալների կրճատումը փոքր-ինչ մեղմվել է պետական բյուջեի (5.5% աճ), համայնքների միջոցների (շուրջ 3.8 անգամ աճ) և մարդասիրական օգնության (6.4% աճ) հաշվին իրականացվող շինարարության ծավալների աճով:

Միջազգային վարկերի հաշվին իրականացվող շինարարության ծավալների նման անկումը պայմանավորվել է ինչպես գյուղատնտեսության, ոռոգման և էներգետիկայի ոլորտներում միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերի ավարտով, այնպես էլ կանխատեսվող խոշոր ճանապարհաշինական («Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցք») և ենթակառուցվածքների (Հայաստան-Իրան և Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդագծեր) բարելավմանն ուղղված շինծրագրերի հետաձգմամբ:

Ծառայությունների ոլորտում ավելացված արժեքի աճը գնահատվում է տ/տ շուրջ 3.7%, ինչը մատուցված ծառայությունների, մանրածախ և մեծածախ առևտրի ծավալների համապատասխանաբար 5.8%, 2.8% և 4.3% աճի արդյունք է: Ընդ որում, մատուցված ծառայությունների ծավալի ավելացմանը հիմնականում նպաստել է ֆինանսական և ապահովագրական գործունության (25.6%), առողջապահության (9.7%), կրթության (3.1%), մշակույթի և հանգստի (5.5%) ոլորտներում արձանագրված աճը:

Գյուղատնտեսության ճյուղում ավելացված արժեքի աճը գնահատվում է տ/տ 15%-ի շրջակայքում՝ ինչը անասնապահության թողարկման ծավալների 0.7% տոկոս անկման պարագայում բուսաբուծության 28.9% աճի արդյունք է:

---

[46] Տնտեսության ճյուղերի ցուցանիշները ԱՎԾ կողմից 2011 թվականի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի համար տնտեսության ճյուղերի թողարկման հրապարակած տվյալների հիման վրա ՀՀ ԿԲ գնահատած ավելացված արժեքներն են, իսկ ենթաճյուղերի ցուցանիշները ներկայացնում են ԱՎԾ կողմից հրապարակած 2011 թվականի հունվար-սեպտեմբերի թողարկման ծավալների փոփոխությունը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:

[47] Սննդամթերքի արտադրության աճն արձանագրվել է հիմնականում ի հաշիվ պահածոների (90.7%), ծավարեղենի (41.2%), շաքարավազի (3.1 անգամ), հրուշակեղենի (8.9%), մակարոնեղենի (19%), մսամթերքի (12%) և կաթնաշոռի (22.3%) արտադրության ծավալների աճի:

[48] Խմիչքների արտադրության աճն արձանագրվել է հիմնականում ի հաշիվ կոնյակի (17%), գինու (9.1%), աղբյուրի ջրի (20%) և բնական հյութերի (26.1%) արտադրության ծավալների աճի:

Ընդ որում, *անասնապահությունում* արձանագրված 0.7% անկումը ամբողջությամբ պայմանավորվել է ձվի արտադրության ծավալների 17.1% անկմամբ, մինչդեռ կաթի և սպանդի համար իրացված անասնի ու թռչնի արտադրության ծավալները համապատասխանաբար աճել են 0.7% և 2.6%-ով: Բ*ուսաբուծությունում* արձանագրված աճը պայմանավորվել է հացահատիկի (21%), կարտոֆիլի (37%), բանջարեղենի (30.6%), պտղի (շուրջ 2.6 անգամ) և բոստանային մշակաբույսերի (45.7%) թողարկման ծավալների աճերով: Ընդ որում, բուսաբուծության արտադրության ծավալների նման աճը արդյունք է ինչպես բարենպաստ եղանակային պայմանների, այնպես էլ ոլորտում Կառավարության կողմից իրականացվող մի շարք ծրագրերի[49]:

3.5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱ [50]

2011 թվականի երրորդ եռամսյակի ընթացքում աշխատանքի շուկայում արձանագրվել է անվանական աշխատավարձերի որոշակի աճ՝ պայմանավորված տնտեսական ակտիվության վերականգնման հետևանքով մասնավոր հատվածում, ինչպես նաև բյուջետային ֆինանսավորում ունեցող որոշ կազմակերպություններում աշխատավարձերի աճով: Երրորդ եռամսյակում տնտեսությունում արձանագրված անվանական աշխատավարձի աճը համահունչ է եղել տնտեսական ակտիվության բարձրացման պայմաններում ձևավորված արտադրողականության աճին: Այս զարգացումների հետևանքով երրորդ եռամսյակում տնտեսությունում արտադրված միավոր արտադրանքին բաժին ընկնող աշխատուժի ծախսերն էականորեն չեն փոխվել, հետևաբար միավոր աշխատուժի ծախսերի փոփոխության ազդեցությունը գնաճի վրա գնահատվում է գրեթե չեզոք:

Միջին անվանական աշխատավարձի աճը երրորդ եռամսյակում կազմել է 6.2%, ինչն արտահայտում է մասնավոր հատվածում աշխատավարձերի աճը և բյուջետային ֆինանսավորում ունեցող որոշ կազմակերպություններում աշխատավարձերի չափավոր աճը: Մասնավոր հատվածում անվանական աշխատավարձերի աճի վրա էական ազդեցություն է ունեցել արդյունաբերության և ծառայությունների ճյուղերում նկատվող արտադրողականության աճը, աշխատուժի նկատմամբ պահանջարկի աճը, ինչպես նաև նախորդ տարվա ընթացքում արձանագրված գների աճը:

Երրորդ եռամսյակում շարունակել է աճել աշխատուժի նկատմամբ պահանջարկը՝ հիմնականում ի հաշիվ արդյունաբերության և ծառայությունների ճյուղերում թողարկման ծավալների աճի: Այս պայմաններում տնտեսությունում զբաղվածների թվի միջին աճը կազմել է 2%, իսկ պաշտոնապես գրանցված գործազրկության միջին եռամսյակային մակարդակը կազմել է 6%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 0.9 տոկոսային կետով:

Տնտեսական ակտիվության աճի պայմաններում երրորդ եռամսյակում տնտեսությունում շուրջ 5%-ով աճել է արտադրողականությունը:


Նշված զարգացումների արդյունքում միավոր աշխատուժի ծախսերն էականորեն չեն փոխվել և, հետևաբար, գնաճի վրա ունեցել են գրեթե չեզոք ազդեցություն:

---

[49] Մասնավորապես՝ գյուղացիական տնտեսությունների վարկավորման, գյուղմթերքի իրացման շղթայի ապահովման, ցորենի և գարու սերմնաբուծության և սերմնարտադրության, օրգանական գյուղատնտեսության զարգացման և տեղական կենսապարարտանյութերի արտադրության ծրագրեր:

[50] Աշխատանքի շուկայի՝ երրորդ եռամսյակի տվյալները ՀՀ ԿԲ գնահատումներն են՝ հիմնված 2011 թվականի օգոստոս, սեպտեմբեր ամիսների փաստացի և հոկտեմբեր ամսվա գնահատված ցուցանիշների վրա: Ենթաբաժնում ներկայացված աճի գնահատականները նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:

Աշխատանքի շուկայի զարգացումները



3.6. ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԳՆԵՐ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԳՆԵՐ

3.6.1. Ներմուծման գներ

2011 թ. երրորդ եռամսյակում համաշխարհային ապրանքային շուկաներում գները հիմնականում արձանագրել են նվազման և կայունացման միտումներ, ինչը դրսևորվել է ինչպես հիմնական պարենային, այնպես էլ հումքային ապրանքների շուկաներում:

Ըստ Կենտրոնական բանկի գնահատումների, 2011 թվականի երրորդ քառորդում ներմուծման դոլարային գների տ/տ աճը երկրորդ եռամսյակի համեմատ (17.1%) նվազել է և երրորդ եռամսյակում կազմել 10.5%:


Ցուցանիշներ	III եռ. 10	IV եռ. 10	I եռ. 11	II եռ. 11	III եռ. 11
Ներմուծում (ընդհանուր)	19.3	18.7	22.9	17.1	10.5
Ներմուծում (ծառայություններ)	2.7	3.1	6.9	13.6	10.4
Ներմուծում (ապրանքներ)	23.8	22.8	27.2	17.9	10.6
Կապիտալ ապրանքներ [51]	0.0	0.0	0.0	0.0	0.0
Սպառողական ապրանքներ	2.7	3.1	6.9	13.6	10.4
Հումքային ապրանքներ	57.8	52.8	56.3	25.0	8.8
Ադամանդ[51]	0.0	0.0	0.0	0.0	0.0
Նավթամթերք	11.8	15.8	36.8	48.8	47.2
Բնական գազ	16.9	16.9	16.9	0.0	0.0

Վերջինս հիմնականում պայմանավորվել է հումքային և պարենային ապրանքների գների դեռևս բարձր մակարդակների պահպանմամբ, ինչպես նաև նավթամթերքների գների տ/տ 47.2% աճով: Հումքային և պարենային ապրանքների դոլարային գներն աճել են տ/տ 8.8%-ով՝ նախորդ եռամսյակի 25%-ի փոխարեն: Ընդհանուր ներմուծման գների վրա հումքային ապրանքների գների ազդեցությունը գնահատվում է 2.7 տոկոսային կետ, իսկ նավթամթերքների գներինը՝ 3.5 տոկոսային կետ:

Ներմուծվող սպառողական ապրանքների դոլարային գները տ/տ աճել են 10.4%-ով, որը պայմանավորվել է առևտրային գործընկեր երկրների բարձր գնաճով (5.8 տոկոս), ինչպես նաև այդ երկրների փոխարժեքների մեծ արժևորմամբ (4.2 տոկոս): Ներմուծվող սպառողական ապրանքների դոլարային գների ազդեցությունը ընդհանուր ներմուծման գների վրա կազմել է 2.4 տոկոսային կետ: Ռուսական ռուբլու և եվրոյի փոխարժեքների տ/տ արժևորումը ՀՀ հիմնական գործընկերների շարքում ամենից ավելի է նպաստել ընդհանուր ներմուծման գներին՝ կազմելով 0.8-ական տոկոսային կետ:

[51] Կապիտալ ապրանքների և ադամանդի գների գնահատումների բացակայությունը պայմանավորված է դրանց փաստացի խիստ մեծ տատանողականությամբ, այդ իսկ պատճառով գների փոփոխությունը գնահատվում է զրոյական:

2011 թ. 3-րդ եռամսյակում դրսևորվել են ներմուծված ապրանքների գների նվազման և կայունացման միտումներ



2011 թ. երրորդ եռամսյակում ներմուծման դոլարային գների տ/տ 10.5% աճի և ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին անվանական փոխարժեքի տ/տ 0.9% արժեզրկման պայմաններում, սպառողական զամբյուղում ներառված՝ ներմուծված ապրանքների դրամային գները միջինը աճել են տ/տ 9.4%-ով:

3.6.2. Արտադրողների գներ[52]

2011 թվականի երրորդ եռամսյակում տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում (բացառությամբ շինարարության) արձանագրվել է գների ինդեքսների աճ, որի արդյունքում հունվար-սեպտեմբերին ՀՆԱ դեֆլյատորը, ըստ ՀՀ ԿԲ գնահատումների, կազմել է տ/տ շուրջ 105:

Գների առավել բարձր աճ արձանագրվել է **արդյունաբերության** ճյուղում, որտեղ եռամսյակային աճը կազմել է տ/տ 7.4%: Ճյուղում հունվար-սեպտեմբերի աճը կազմել է տ/տ 10.9%՝ հիմնականում պայմանավորված հանքագործական արդյունաբերության՝ 7.1%, մշակող արդյունաբերության՝ 9.2% և էներգիայի, գազի արտադրության և բաշխման 19.1% աճով: Ընդ որում, հանքագործական և մշակող արդյունաբերության գների աճը համապատասխանաբար պայմանավորել են համաշխարհային շուկաներում 2011 թվականի հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, գունավոր մետաղների գների աճը և համաշխարհային ու ներքին պահանջարկի վերականգնման շարունակական բնույթը:

Գյուղատնտեսության ճյուղում եռամսյակի ընթացքում արձանագրվել է գների[53] տ/տ 8.5% աճ, իսկ հունվար-սեպտեմբերի աճը կազմել է տ/տ 19.9%: Վերջինս, բուսաբուծության թողարկման ծավալների դանդաղ վերականգնման պատճառով հունվար-ապրիլ ժամանակահատվածում ճյուղում արձանագրված բարձր գնաճի հետևանք է, մինչդեռ մայիս-սեպտեմբեր ժամանակահատվածում ճյուղում անընդմեջ գների նվազում է արձանագրվել:

Ընդ որում, բուսաբուծությունում արձանագրվել է գների 4.4% աճ՝ պայմանավորված գյուղմթերքի թողարկման ծավալների աճի նկատմամբ ներքին և արտաքին պահանջարկի առաջացիկ աճով: Գների աճին՝ մեծապես նպաստել են հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում կարտոֆիլի և բանջարաբոստանային կուլտուրաների գների տ/տ 19.1% և հացահատիկային մշակաբույսերի գների 21% աճը: Անասնաբուծությունում, հիմնականում պայմանավորված արտադրության ծավալների կրճատմամբ, հունվար-սեպտեմբերին արձանագրվել է

---

[52] 2011 թվականի տարեսկզբից ԱՎԾ-ն հրապարակում է Տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ-ը), որտեղ «Գներ և սակագներ» հատվածում ներկայացված է համառոտ տեղեկություն՝ գների փոփոխությունների վերաբերյալ: Ընդ որում, վերջինիս համաձայն, գների փոփոխությունները ներկայացվում են ըստ տնտեսության առանձին հատվածների (առանց մանրամասն տեղեկատվության), որի հիման վրա ՀՀ ԿԲ կողմից գնահատել է ՀՆԱ դեֆլյատորի ընդհանուր ցուցանիշը:


[53] Ներկայացված են գյուղատնտեսական մթերք արտադրողի իրացման գները:

գների տ/տ 31.3% աճ, որը կաթի և կաթնամթերքի գների 47.7%, մսի և ձվի գների համապատասխանաբար 20% և 21.1% աճի հետևանք է:

Շինարարությունում երրորդ եռամսյակում արձանագրվել է գնանկում՝ տ/տ 6.9%, իսկ հունվար-սեպտեմբերի անկումը կազմել է տ/տ 1.7%՝ հիմնականում պայմանավորված շինարարության ծավալների նվազմանը շինանյութերի գների արագ արձագանքով:

Բեռնափոխադրումների գները երրորդ եռամսյակում տ/տ ավելացել են 3.1%-ով, իսկ հունվար-սեպտեմբերի աճը կազմել է տ/տ 6.6%՝ պայմանավորված *երկաթուղային (8.2% աճ), ավտոմոբիլային (3.2% աճ) և խողովակաշարային (9.7% աճ) տրանսպորտի* սակագների աճով: Ընդ որում, առավել բարձր աճ արձանագրած՝ խողովակաշարային տրանսպորտի սակագների աճը հետևանք է նախորդ տարվա ապրիլի 1-ից գազի սակագների բարձրացման:

2011 թ. հունվար-սեպտեմբերին գների առավել բարձր աճ է գրանցվել գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղերում



3.7. ԳՆԱՁԻ ՍՊԱՍՈՒՄՆԵՐ

ՀՀ կենտրոնական բանկը գնաճի սպասումների վերաբերյալ 2011թ. երրորդ եռամսյակում հարցումներ է իրականացրել ֆինանսական հատվածի կազմակերպությունների և իրական հատվածի ոչ ֆինանսական կազմակերպությունների շրջանում:

Վերջին երկու եռամսյակների ընթացքում 12-ամսյա գնաճի փաստացի դրսևորված նվազման միտումները հիմնականում համահունչ են եղել ԿԲ կանխատեսումներում նախանշված նվազողական վարքագծին: Դրան ֆինանսական համակարգը հիմնականում արձագանքել է բարձր գնաճային սպասումների որոշ չափով մեղմմամբ. հետագա 12-ամսյա ժամանակահատվածի համար, երրորդ եռամսյակի հարցման արդյունքներով, նախորդ եռամսյակի 23.8%-ի փոխարեն, բանկերի 42.8%-ն է ընտրել ցածր՝ 2.5 - 5.5% միջակայքը: Այդուհանդերձ, քանի որ վերջին մեկ տարում ձևավորվել է անհամեմատ բարձր գնաճային միջավայր, իսկ Հայաստանում դեռևս գերակշռում են ադապտիվ (նախորդ ժամանակահատվածի փաստացի միտումների վրա հիմնված) սպասումները, հարցվածների մեջ դեռևս մեծ տեսակարար կշիռ են կազմում 12-ամսյա գնաճի 5.5 - 8.5% միջակայքը ընտրած բանկերը և վարկային կազմակերպությունները՝ համապատասխանաբար 57.2% և 60.7%: Փաստենք, որ վերջին հարցման արդյունքներով 8.5%-ից բարձր միջակայք ընտրողներ չկան:

Ըստ հարցման արդյունքների՝ մեկ տարվա հորիզոնով առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների սպասումները շուկայական տոկոսադրույքների վերաբերյալ կրկին ենթադրում են կայուն մակարդակի պահպանում: Տոկոսադրույքների որոշակի նվազում է ակնկալվում պետական պարտատոմսերի և արտարժութային վարկավորման շուկաներում:

© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2011

Երևան - 10, Վ. Սարգսյան 6. http:// www.cba.am